

**Խորհրդի 85/337/ԵՏՀ հրահանգը, Եվրոպական պառլամենտի և Խորհրդի
2000/60/ԵՀ, 2001/80/ԵՀ, 2004/35/ԵՀ, 2006/12/ԵՀ, 2008/1/ԵՀ
հրահանգներն ու թիվ 1013/2006 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝
Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի
2009/31/ԵՀ հրահանգ**

**Ածխաթթու գազի ստորերկրյա պահեստավորման մասին
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

Պաշտոնական տեղեկագիր L 140, 05.06.2009թ., էջեր 0114 - 0135

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,
հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],
Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,
գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [2],
Քանի որ

- 1) «Կլիմայի փոփոխության մասին» Միավորված ազգերի կազմակերպության
շրջանակային կոնվենցիայի հիմնական նպատակը մթնոլորտային օդում ջերմոցային
գազերի կայունացումն է այնպիսի մակարդակի վրա, որը կկանխի վտանգավոր
մարդածին ազդեցությունը կլիմայական համակարգի վրա,
- 2) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 22-ի թիվ
1600/2002/ԵՀ որոշմամբ [4] սահմանված՝ Համայնքային բնապահպանական
գործողությունների վեցերորդ ծրագրով կլիմայի փոփոխության խնդիրը
գերակայություն է համարվում՝ գործողություններ ձեռնարկելու առումով: Այդ ծրագրով
հաստատվում է, որ 2008–2012 թվականներին. Համայնքի նպատակը ջերմոցային
գազերի արտանետումները 8%-ով նվազեցնելն է՝ 1990 թվականի մակարդակների
համեմատությամբ, ինչպես նաև այն, որ երկարատև ժամկետով ջերմոցային գազերի
համաշխարհային արտանետումները 1990 թվականի համեմատությամբ պետք է
կրճատվեն 70 %-ով,

3) Հանձնաժողովի՝ «Կլիմայի գլոբալ փոփոխությունը մինչև Ցելսիուսի 2 աստիճան սահմանափակելը. 2020 թվականին և դրանից հետո ծրագրվող գործողությունները» վերտառությամբ 2007 թվականի հունվարի 10–ի հաղորդագրությամբ հստակեցվում է, որ մինչև 2050 թվականը ջերմոցային գազերի գլոբալ արտանետումների 50% –ի կրճատման պարագայում անհրաժեշտ է, որ զարգացած երկրներում 2020 թվականի դրությամբ ջերմոցային գազերի արտանետումները կրճատվեն 30%-ով, որը 2050 թվականին կհասնի 60-80%-ի. հաղորդագրության մեջ նշվում է նաև, որ կրճատման նման ծավալները իրատեսական են, և օգուտները մեծապես գերազանցում են կատարվելիք ծախսերը, սակայն ցանկալի նշաձողին հասնելու համար պետք է գործի դրվեն աղտոտումը նվազեցնելու բոլոր հնարավոր միջոցները,

4) ածխաթթու գազի որսումը և ստորերկրյա պահեստավորումը (ԱԳՈՍՊ) այն մեթոդն է, որը կնպաստի կլիմայի փոփոխությունը մեղմելու գործին: Այդ մեթոդը՝ արդյունաբերական օբյեկտներից արտանետվող ածխաթթու գազի (CO_2) որսման, պահեստավորման վայր դրա տեղափոխման և մշտական պահեստավորման նպատակով համապատասխան ստորերկրյա երկրաբանական կազմավորումներ դրանց ներմղման գործընթացն է: Այս տեխնոլոգիան չպետք է որպես հանածո վառելիքներով գործող էներգիա արտադրող կայանների մասնաբաժինն ավելացնելու խթան ծառայի: Դրա զարգացումը չպետք է հանգեցնի էներգիայի խնայողության քաղաքականությանը, վերականգնվող էներգիայի աղբյուրներին և ածխաթթու գազի ցածր արտանետումներով այլ անվտանգ ու կայուն տեխնոլոգիաներին օժանդակող գործողությունների կրճատմանը՝ ինչպես ուսումնասիրությունների, այնպես էլ ֆինանսական աջակցության առումով,

5) Հրահանգի ազդեցությունը գնահատելու համար իրականացված և Հանձնաժողովի ազդեցության գնահատման մեջ նշված նախնական գնահատումները ցույց են տալիս, որ 2020 թվականի դրությամբ կարող է պահվել յոթ միլիոն տոննա, իսկ մինչև 2030 թվականը՝ մինչև 160 միլիոն տոննա CO_2 , հաշվի առնելով, որ 2020 թվականի դրությամբ ջերմոցային գազերի արտանետումները կկրճատվեն 20%-ով և պայմանով, որ ԱԳՈՍՊ–ին մասնավոր, ազգային և համայնքային մակարդակով օժանդակություն տրամադրվի և, որ ապացուցվի, որ այն բնապահպանական առումով անվտանգ մեթոդ է: 2020 թվականին չարտանետված CO_2 ծավալներն արդեն իսկ կարող են Միությունում պահանջվող կրճատումների 15%-ը կազմել,

6) «Հաղթել կլիմայի գլոբալ փոփոխության դեմ պայքարում» վերտառությամբ Կլիմայի փոփոխության եվրոպական երկրորդ ծրագրով, որը սահմանվել է Հանձնաժողովի 2005

թվականի փետրվարի 9-ի հաղորդագրությամբ՝ Համայնքում կլիմայի հետագա քաղաքականությունը մշակելու և ուսումնասիրելու նպատակով, Ածխաթթու գազի որսման և երկրաբանական պահեստավորման հարցերով աշխատանքային խումբ է ձևավորվել: Աշխատանքային խմբի մանդատն է ուսումնասիրել ԱԳՈՍՊ-ը՝ որպես կլիմայի փոփոխության նվազեցման միջոց: Աշխատանքային խումբը կարգավորման թեմայի վերաբերյալ մանրամասն զեկույց է հրապարակել, որն ընդունվել է 2006 թվականի հունիսին: Դրանում հատկապես կարևորվում է ԱԳՈՍՊ-ի մասով քաղաքականության և կարգավորման շրջանակի մշակումն ու Հանձնաժողովին կոչ է արվում առավել խորն ուսումնասիրել խնդրո առարկան,

7) Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Հանածո վառելիքներից կայուն էներգիայի արտադրություն. 2020 թվականից հետո ածխից զրոյականին մոտ արտանետումների ապահովում» վերտառությամբ հաղորդագրության մեջ կրկին անգամ շեշտվել է CO₂-ի արտահոսքի ռիսկերի համատեղ գնահատման վրա հիմնված կարգավորիչ շրջանակի կարիքը՝ ներառյալ արտահոսքի ռիսկերը նվազեցնելուն ուղղված համապատասխան վայրի ընտրության պահանջների առկայությունը, ինչպես նաև պահեստավորման փաստը հաստատելու և հնարավոր վնասների համապատասխան կերպով վերացումը դիտանցելու և հաշվետվությունները ներկայացնելու ռեժիմները: Հաղորդագրությունն այս ոլորտում Հանձնաժողովի համար 2007թվականի ընթացքում գործողությունների ծրագիր էր սահմանում՝ պահանջելով մշակել ԱԳՈՍՊ-ի արդյունավետ կառավարման շրջանակ, այդ թվում՝ կարգավորման և խթանների շրջանակ, ինչպես նաև օժանդակել համապատասխան ծրագրերին և արտաքին բաղադրիչներին, օրինակ՝ ԱԳՈՍՊ-ի մասով առանցքային պետությունների հետ տեխնոլոգիաների գծով համագործակցությանը,

8) Եվրոպական խորհուրդը 2007 թվականի մարտին անդամ պետություններին ու Հանձնաժողովին նաև կոչ արեց աշխատանքներ տանել ոլորտում ուսումնասիրություններն ու ձեռքբերումները խթանելու ուղղությամբ և մշակել անհրաժեշտ տեխնիկական, տնտեսական ու կարգավորիչ շրջանակ՝ հանածո վառելիքով գործող էներգիայի արտադրության կայաններում, հնարավորության դեպքում 2020 թվականի դրությամբ, ԱԳՈՍՊ-ի կիրառման իրավական խոչընդոտները վերացնելու և բնապահպանության տեսանկյունից անվտանգ ԱԳՈՍՊ-ի մեխանիզմներ կիրառելու նպատակով,

- 9) Եվրոպական խորհուրդը 2008 թվականի մարտին վկայակոչեց, որ ԱԳՈՍՊ-ի կարգավորիչ շրջանակ առաջարկելու նպատակը նորարարական տեխնոլոգիաների՝ բնապահպանական առումով անվտանգ եղանակով շահագործումն ապահովելն էր,
- 10) Եվրոպական խորհուրդը 2008 թվականի հունիսին Հանձնաժողովին կոչ արեց հնարավորինս շուտ մեխանիզմներ մշակել, որոնք կխթանեն անդամ պետությունների և մասնավոր հատվածի ներդրումները՝ ապահովելու համար մինչև 12 ԱԳՈՍՊ կիրառող կայանների կառուցումն ու գործարկումը 2015 թվականի դրությամբ,
- 11) ԱԳՈՍՊ-ի տարբեր բաղադրիչներից յուրաքանչյուրը, մասնավորապես՝ CO₂-ի որսումը, փոխադրումը և պահեստավորումը, իրականացվել են պիլոտային ծրագրերի շրջանակներում՝ առավել փոքր մասշտաբներով, քան անհրաժեշտ է՝ դրանց արդյունաբերական կիրառման համար: Այս բաղադրիչները պետք է ինտեգրվեն ԱԳՈՍՊ-ի ընդհանուր գործընթացում, տեխնոլոգիական ծախսերը պետք է կրճատվեն և դրա վերաբերյալ պետք է բավարար գիտական տեղեկություններ հավաքվեն: Հետևաբար անհրաժեշտ է, որ Համայնքի մակարդակով իրականացվող՝ համատեղ քաղաքականության շրջանակներում ԱԳՈՍՊ-ի կիրառմանն ուղղված աշխատանքներն սկսվեն հնարավորինս շուտ, մասնավորապես ներառելով բնապահպանական առումով ապահով CO₂ -ի պահեստավորման իրավական դաշտ, խթաններ՝ հատկապես հետագա հետազոտությունների և զարգացման համար, ինչպես նաև՝ որպես ԱԳՈՍՊ-ի կիրառման ծրագրեր ու հանրային իրազեկման աշխատանքներ,
- 12) միջազգային մակարդակում ծովի հատակի տակ ստորերկրյա կազմավորումներում CO₂-ի ստորերկրյա պահեստավորման նկատմամբ իրավական խոչընդոտները վերացել են «Թափոնների և այլ նյութերի թաղման միջոցով ծովային աղտոտումը կանխարգելելու մասին» 1972 թվականի կոնվենցիայի 1996 թվականի Լոնդոնի արձանագրությամբ (1996 թվականի Լոնդոնի արձանագրություն) և «Ատլանտիկ օվկիանոսի հյուսիսարևելյան մասի ծովային միջավայրի պահպանության մասին» կոնվենցիայով (ՕՍՊԱԲ կոնվենցիա) սահմանված ռիսկերի կառավարման շրջանակի ընդունմամբ,
- 13) 1996 թվականի Լոնդոնի արձանագրության Պայմանավորվող կողմերը 2006 թվականին ընդունել են Արձանագրության փոփոխությունները: Այս փոփոխություններով թույլատրվում և կարգավորվում է ծովի հատակի տակ ստորերկրյա կազմավորումներում CO₂-ի որսման գործընթացների արդյունքում առաջացող CO₂-ի հոսքերի պահեստավորումը,

14) ՕՍՊԱՐ կոնվենցիայի Պայմանավորվող կողմերը 2007 թվականին ընդունեցին Կոնվենցիայի հավելվածների փոփոխությունները, որոնք ծովի հատակի տակ ստորերկրյա կազմավորումներում CO₂-ի պահեստավորման հնարավորություն են տալիս. կողմերը նաև այնպիսի որոշում ընդունեցին, որով ապահովվում է ստորերկրյա կազմավորումում CO₂-ի հոսքերի բնապահպանական առումով անվտանգ պահեստավորումը, ինչպես նաև այդ գործունեության ռիսկերի գնահատման և կառավարման Օսպարի ուղեցույցը: Կողմերը նաև այնպիսի որոշում են ընդունել, որով արգելվել է CO₂-ի ներմղումը ծովի ջրաայան կամ ծովի հատակի մեջ՝ հնարավոր բացասական ազդեցությունների հետևանքով,

15) Համայնքի մակարդակով արդեն իսկ առկա են մի շարք օրենսդրական փաստաթղթեր, որոնք կարգավորում են ԱԳՈՍՊ-ի կիրառման բնապահպանական ռիսկերից մի քանիսը, մասնավորապես՝ CO₂ -ի որսմանը և փոխադրմանն առնչվող ռիսկերը, և այդ փաստաթղթերը պետք է հնարավորության դեպքում կիրառվեն,

16) «Աղտոտման համատեղ կանխման և վերահսկման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 2008/1/ԵՀ հրահանգը [5] որոշակի արդյունաբերական գործունեությունների մասով կարող է պատշաճ կէջորեն կանոնակարգել շրջակա միջավայրի և մարդու առողջության համար ռիսկերը և, դրա արդյունքում, CO₂-ի հոսքերի որսման դեպքում պետք է կիրառվի դրանով կարգավորվող օբյեկտներից՝ ստորերկրյա պահեստավորման նպատակով,

17) «Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր նախագծերի ազդեցությունները գնահատելու մասին» Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի թիվ 85/337/ԵՏՀ հրահանգը [6] CO₂-ի հոսքի որսման և փոխադրման դեպքում կիրառվում է ստորերկրյա պահեստավորման նպատակով: Այն կիրառվում է նաև սույն Հրահանգով սահմանված պահեստավորման վայրերի նկատմամբ,

18) սույն Հրահանգը կիրառվում է անդամ պետությունների տարածքում, դրանց բացառիկ տնտեսական գոտիներում և դրանց մայրցամաքային ելունդների տարածքում CO₂-ի ստորերկրյա պահեստավորման նկատմամբ: Սույն Հրահանգը չի կիրառվում ընդհանուր 100 կիլոտոննայից պակաս պահեստավորման ծավալ նախատեսող ծրագրերի նկատմամբ, որոնք ձեռնարկվել են նոր արտադրանքի և պրոցեսների ուսումնասիրության, նախագծման կամ փորձարկման նպատակով: Այս շեմը տրամաբանական է նաև Համայնքի այլ համապատասխան օրենսդրության նպատակներով: CO₂-ի պահեստավորումն այն պահեստավորման համալիրներում,

որոնք գտնվում են սույն Հրահանգի կողմից կարգավորվող տարածքներից դուրս, ինչպես նաև CO₂-ի պահեստավորումը ջրայան մեջ, չի թույլատրվում,

19) անդամ պետություններին իրավունք է վերապահվում իրենց տարածքում որոշելու այն վայրերը, որտեղ կարող է պահեստավորվել ածխաթթու գազը: Սա ներառում է անդամ պետությունների իրավունքը՝ չթույլատրել իրենց ամբողջ տարածքում կամ դրա մի մասում պահեստավորում իրականացնելը, կամ առաջնահերթություն տալ ընդերքը որևէ այլ կերպ օգտագործելուն, ինչպես, օրինակ՝ ածխաջրածինների հետազոտումը, արտադրությունն ու պահեստավորումը կամ գեոթերմալ ջրերի օգտագործումը: Անդամ պետություններն այս համատեքստում մասնավորապես, պետք է պատշաճորեն քննարկեն պահեստավորման հավանական վայրի օգտագործումը՝ էներգետիկ ոլորտին առնչվող այլ, այդ թվում՝ անդամ պետության էներգետիկ մատակարարման անվտանգության համար կամ էներգիայի վերականգնվող աղբյուրների զարգացման առումով ռազմավարական նպատակներով: Համապատասխան պահեստավորման վայրի ընտրությունը չափազանց կարևոր է՝ ապահովելու համար, որ պահեստավորված CO₂-ն ամբողջությամբ և մշտապես տեղափակվի: Պահեստավորման տարածքներ ընտրելիս անդամ պետությունները պետք է հնարավորինս առավել օբյեկտիվ և արդյունավետ կերպով հաշվի առնեն իրենց տարածքի երկրաբանական յուրահատկությունները, ինչպես, օրինակ՝ սեյսմիկությունը: Ուստի համապատասխան վայրն ընտրվում է որպես պահեստավորման վայր միայն այն դեպքում, եթե այդտեղ գոյություն չունի արտահոսքի լուրջ վտանգ, և եթե շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա դրա ազդեցությունը ցանկացած դեպքում էական չէ: Այս հանգամանքը որոշվում է պահեստավորման հավանական համալիրի բնութագրման և գնահատման միջոցով,

20) ածխաջրածինների ինտենսիվ արդյունահանումը (ԱԻԱ) կիրառվում է ջուր ներմղելու կամ այլ միջոցներով ածխաջրածիններ օգտահանելուց բացի՝ նաև այլ դեպքերում: ԱԻԱ-ն որպես այդպիսին չի կարգավորվում Հրահանգով: Այդուհանդերձ, եթե ԱԻԱ-ն զուգորդվում է CO₂-ի ստորերկրյա պահեստավորման հետ, ապա գործում են սույն Հրահանգի CO₂-ի բնապահպանական տեսանկյունից անվտանգ պահեստավորման վերաբերյալ դրույթները: Այդ դեպքում չի նախատեսվում, որ արտահոսքին առնչվող՝ սույն Հրահանգի դրույթները կիրառվեն վերգետնյա օբյեկտներից արտանետվող CO₂-ի այն ծավալների նկատմամբ, որոնք չեն համապատասխանում ածխաջրածինների օգտահանման բնականոն պրոցեսին, և որոնք վտանգի տակ չեն դնում ստորերկրյա պահեստավորման անվտանգությունը կամ բացասաբար չեն ազդում շրջակա

միջավայրի վրա: Նման արտանետումները կարգավորվում են Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտահանումների քվոտաների առևտրի համակարգ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 2003/87/ԵՀ հրահանգի [7] գործողության շրջանակի մեջ պահեստավորման վայրերը ներառելով, որով ցանկացած արտահոսքի դեպքում պահանջվում է ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների զիջում,

21) անդամ պետությունները հանրության համար մատչելի են դարձնում CO₂-ի ստորերկրյա պահեստավորման վերաբերյալ տեղեկությունները՝ Համայնքի օրենսդրությանը համապատասխան,

22) այն անդամ պետությունները, որոնք նախատեսում են թույլատրել CO₂-ի ստորերկրյա պահեստավորումն իրենց տարածքում, պետք է իրենց տարածքում առկա պահեստավորման կարողությունների գնահատում իրականացնեն: Հանձնաժողովն այդ անդամ պետությունների միջև կազմակերպում է տեղեկությունների և լավագույն փորձի փոխանակում՝ սույն Հրահանգով նախատեսված տեղեկությունների փոխանակման համատեքստում,

23) անդամ պետությունները որոշում են, թե որ դեպքերում է տարածքի ընտրության համար անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով ընդերքի ուսումնասիրություն պահանջվում: Ընդերքի ուսումնասիրության համար, որը ենթադրում է աշխատանքներ հողի ներքին շերտերի հետ, պետք է թույլտվություն պահանջվի: Կարիք չկա, որ անդամ պետությունները ընդերքի ուսումնասիրության թույլտվություն տալու համար ընտրության չափանիշներ սահմանեն, սակայն եթե սահմանում են, ապա պետք է առնվազն ապահովեն, որ անհրաժեշտ կարողություններ ունեցող բոլոր անձինք կարողանան դիմել ընդերքի ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար: Անդամ պետությունները պետք է ապահովեն նաև, որ այդ թույլտվությունները տրամադրվեն անկողմնակալ, հրապարակային և խտրականությունը բացառող չափանիշների հիման վրա: Հետախուզական աշխատանքներն իրականացնելու համար ներդրումները խրախուսելու նպատակով թույլտվությունները պետք է տրամադրվեն սահմանափակ տարածքի և որոշակի ժամկետի համար, որի ընթացքում թույլտվություն ունեցող անձը պետք է CO₂-ի հնարավոր պահեստավորման համալիրը հետազոտելու բացառիկ իրավունք ունենա: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ նշված ժամկետում համալիրն այլ նպատակներով չօգտագործվի: Եթե ողջամիտ ժամկետում թույլտվություն ունեցող անձը

որևէ գործողություն չի իրականացնում, անդամ պետություններն ապահովում են, որ ընդերքի ուսումնասիրության թույլտվությունը վերցվի այդ անձից և տրվի այլ անձանց, 24) պահեստավորման վայրերը չպետք է շահագործվեն առանց պահեստավորման թույլտվության: Պահեստավորման թույլտվությունը պետք է լինի այն հիմնական փաստաթուղթը, որն ապահովում է, որ սույն Հրահանգով նախատեսված էական պահանջները բավարարվեն և, որ ստորերկրյա պահեստավորումը բնապահպանական տեսանկյունից անվտանգ իրականացվի: Պահեստավորման թույլտվություն տալիս մրցակիցներից նախապատվությունը տրվում է ընդերքի ուսումնասիրության թույլտվություն ունեցող անձին, քանի որ վերջինս մինչ այդ սովորաբար բավական մեծ թվով ներդրումներ է կատարել,

25) սույն Հրահանգի կիրարկման սկզբնական շրջանում Համայնքում սույն Հրահանգի պահանջների կիրառման հետևողականությունն ապահովելու նպատակով պահեստավորման թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումները Հանձնաժողովին պետք է ներկայացվեն անմիջապես դրանց ստացումից հետո: Պահեստավորման թույլտվությունների նախագծերը պետք է Հանձնաժողովին փոխանցվեն, որպեսզի վերջինս կարողանա դրանք ստանալուց հետո քառամսյա ժամկետում եզրակացություն ներկայացնել դրանց վերաբերյալ: Ազգային իշխանությունները պետք է հաշվի առնեն Հանձնաժողովի եզրակացությունը՝ թույլտվություն տալու վերաբերյալ որոշում կայացնելիս և պետք է հիմնավորեն Հանձնաժողովի եզրակացությանը հակասող ցանկացած որոշում: Համայնքի մակարդակով ուսումնասիրությունը կոչված է նաև խթանելու ԱԳՈՄՊ-ի նկատմամբ հանրության վստահությունը,

26) իրավասու մարմինը պետք է վերանայի և անհրաժեշտության դեպքում երկարաձգի կամ դադարեցնի թույլտվության գործողությունը եթե, մասնավորապես, այն տեղեկացվում է արտահոսքի կամ էական խախտումների մասին և, եթե օպերատորների կողմից ներկայացված հաշվետվությունները կամ իրականացված ստուգումները ցույց են տալիս, որ խախտվել են թույլտվության պայմանները, կամ եթե իրավասու մարմինը տեղեկացվում է օպերատորի կողմից թույլտվությամբ նախատեսված պայմանների այլ խախտումների մասին: Թույլտվության գործողության դադարեցումից հետո իրավասու մարմինը կամ պետք է նոր թույլտվություն տա, կամ պետք է փակի պահեստավորման վայրը: Իրավասու մարմինն այդ ընթացքում իր վրա է վերցնում պահեստավորման վայրին առնչվող պատասխանատվությունը, այդ թվում՝

կոնկրետ իրավական պարտավորությունները: Իրավասու մարմնի կրած ծախսերը պետք է ծածկի նախկին օպերատորը,

27) անհրաժեշտ է CO₂-ի հոսքի բաղադրություն վրա այնպիսի սահմանափակումներ կիրառել, որոնք համահունչ են ստորերկրյա պահեստավորման հիմնական նպատակի հետ, որն է՝ CO₂-ի արտանետումները մթնոլորտից մեկուսացնելը, և որոնք հիմնավորվում են CO₂-ի փոխադրման ու պահեստավորման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության ապահովությանն ու անվտանգությանը աղտոտման հետևանքով սպառնացող վտանգով: Այս պատճառով CO₂-ի հոսքի բաղադրությունը պետք է ճշտվի՝ նախքան դրա ներմղումն ու պահեստավորումը: CO₂-ի բաղադրությունը որոշվում է որսման կայանքներում տեղի ունեցող պրոցեսների ժամանակ: 85/337/ԵՏՀ հրահանգով սահմանված որսման կայանքների ներդրումից հետո շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է որսման գործունեությամբ զբաղվելու թույլտվություն տալու գործընթացի հետ միաժամանակ: 85/337/ ԵՏՀ հրահանգով սահմանված որսման կայանքների ներդրումն ապահովում է, որ CO₂-ի հոսքի բաղադրությունը բարելավվելուն ուղղված լավագույն կիրառելի մեթոդները սահմանված են և կիրառվում են: Ավելին, սույն Հրահանգին համապատասխան, պահեստավորման վայրի օպերատորը կարող է կլանել և ներմղել CO₂-ի հոսքերը միայն այն դեպքում, եթե կատարված է դրա բաղադրության՝ ներառյալ կերամաշոռ նյութերի վերլուծությունը, ինչպես նաև եթե անց է կացվել ռիսկերի գնահատում, և դրա արդյունքում պարզվել է, որ CO₂-ի հոսքի աղտոտման մակարդակները համապատասխանում են սույն Հրահանգում նշված բաղադրության չափորոշիչներին,

28) դիտանցումը կարևոր է՝ գնահատելու համար, թե արդյոք ներմղված CO₂-ի վարքագիծը կանխատեսելի է, արդյոք տեղի է ունենում որևէ միգրացիա կամ արտահոսք, և արդյոք որևէ բացահայտված արտահոսք վնասում է շրջակա միջավայրին կամ մարդու առողջությանը: Այս առումով, անդամ պետություններն ապահովում են, որ իրականացման փուլում օպերատորը դիտանցի պահեստավորման համալիրը և ներմղման սարքավորումներն ըստ դիտանցման պլանի, որը մշակվել է դիտանցման հատուկ պահանջների հիման վրա: Այդ պլանը պետք է ներկայացվի իրավասու մարմին և հաստատվի նրա կողմից: Ծովի հատակի տակ ստորերկրյա պահեստավորման դեպքում դիտանցումը պետք է հարմարեցվի ծովային միջավայրում ԱԳՈՍՊ-ի կառավարման հատուկ պայմաններին,

29) օպերատորը, ի թիվս այլ պարտավորությունների, դիտանցման արդյունքների մասին առնվազն տարին մեկ անգամ իրավասու մարմին հաշվետվություն է

ներկայացնում: Ավելին, անդամ պետությունները ներդնում են ստուգումների համակարգ՝ ապահովելու համար պահեստավորման վայրի շահագործումը՝ սույն Հրահանգի պահանջներին համապատասխան,

30) անհրաժեշտ է սահմանել այնպիսի դրույթներ, որոնք պատասխանատվություն են նախատեսում տեղի շրջակա միջավայրի և կլիմայի վրա բացասական ազդեցության համար, որն ածխաթթու գազի մշտական տեղափակումը չապահովելու հետևանք է: Բնապահպանական վնասների համար պատասխանատվությունը կարգավորվում է «Բնապահպանական վնասները կանխարգելելու և վերացնելու առնչությամբ բնապահպանական պարտավորության մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգով [8], որը տարածվում է սույն Հրահանգին համապատասխան իրականացվող պահեստավորման վայրերի շահագործման վրա: Արտահոսքի հետևանքով կլիմային հասցվող վնասների համար պատասխանատվությունն առաջանում է, երբ պահեստավորման վայրերը ներառվում են 2003/87/ԵՀ հրահանգի գործողության շրջանակում, հաշվի առնելով, որ ցանկացած արտահոսքի դեպքում պահանջվում է ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների զիջում: Ավելին, Հրահանգը պետք է նաև պահեստավորման վայրի օպերատորի համար սահմանի արտահոսքի կամ էական խախտումների դեպքում ուղղիչ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն՝ իրավասու ազգային մարմին ներկայացված և նրա կողմից հաստատված ուղղիչ միջոցների ծրագրի հիման վրա: Եթե օպերատորը չի ձեռնարկում անհրաժեշտ ուղղիչ միջոցները, ապա դրանք պետք է ձեռնարկի իրավասու մարմինը՝ օպերատորից գանձելով համապատասխան ծախսերը,

31) օպերատորի դիմումի հիման վրա պահեստավորման վայրը պետք է փակվի, եթե թույլտվության մեջ սահմանված համապատասխան պայմանները բավարարվել են, և իրավասու մարմինը տվել է իր համաձայնությունը, կամ եթե իրավասու մարմինը նման որոշում է կայացնում պահեստավորման թույլտվությունը դադարելուց հետո,

32) պահեստավորման վայրի փակումից հետո օպերատորը շարունակում է պատասխանատվություն կրել դրա կառավարման, դիտանցման ու ղեկավարման, հաշվետվությունները ներկայացնելու և ուղղիչ միջոցները ձեռնարկելու համար՝ սույն Հրահանգի պահանջներին համապատասխան ու իրավասու ազգային մարմին ներկայացված և դրա կողմից հաստատված փակմանը հաջորդող գործողությունների ծրագրի հիման վրա. օպերատորը շարունակում է պատասխանատվություն կրել նաև համապատասխան համայնքային օրենսդրության ներքո՝ մինչև պահեստավորման համար պատասխանատվությունն անցնի իրավասու մարմնին,

33) պահեստավորման վայրի համար պատասխանատվությունը՝ ներառյալ իրավական հատուկ պարտավորությունները, փոխանցվում են իրավասու մարմնին, եթե և երբ ամբողջ առկա տվյալներն ապացուցում են, որ պահեստավորված CO₂-ն ամբողջովին և մշտապես տեղափակված է: Այս նպատակով օպերատորը պետք է հաշվետվություն ներկայացնի իրավասու մարմին՝ փոխանցումը հաստատելու համար: Սույն Հրահանգի կիրարկման սկզբնական շրջանում Համայնքում սույն Հրահանգի պահանջների կիրառման հետևողականությունն ապահովելու նպատակով բոլոր հաշվետվությունները Հանձնաժողով պետք է ներկայացվեն անմիջապես դրանց ստացումից հետո: Հաստատման որոշումների թույլտվությունների նախագծերը պետք է Հանձնաժողովին փոխանցվեն, որպեսզի վերջինս կարողանա դրանք ստանալուց հետո քառամսյա ժամկետում եզրակացություն ներկայացնել դրանց վերաբերյալ: Ազգային իշխանությունները պետք է հաշվի առնեն Հանձնաժողովի եզրակացությունը՝ հաստատման որոշում կայացնելիս և պետք է հիմնավորեն Հանձնաժողովի եզրակացությանը հակասող ցանկացած որոշում: Հաստատման որոշման նախագծի վերանայումը, պահեստավորման թույլտվության նախագծերի վերանայման նման, պետք է կոչված լինեն խթանելու ԱԳՈՍԴ-ի նկատմամբ հանրության վստահությունը,

34) սույն Հրահանգով, 2003/87/ԵՀ և 2004/35/ԵՀ հրահանգներով նախատեսված, մասնավորապես ներմղման փուլին առնչվող պարտավորությունները, ինչպես նաև պահեստավորման վայրի փակմանը և իրավասու մարմնին իրավական պարտավորությունները փոխանցելուն հաջորդող շրջանին առնչվող պարտավորությունները կատարվում են ազգային մակարդակով,

35) պատասխանատվության փոխանցումից հետո դիտանցումը սահմանափակվում է այնքանով, որ հնարավոր լինի բացահայտելու արտահոսքերն ու էական խախտումները, իսկ դրանց բացահայտման դեպքում առավել ինտենսիվ է դառնում : Պատասխանատվության փոխանցումից հետո իրավասու մարմնի կողմից կրած ծախսերը չեն կարող գանձվել նախկին օպերատորից, բացառությամբ, եթե խնդիրն առաջացել է նախկին օպերատորի մեղքով՝ պահեստավորման վայրի նկատմամբ պատասխանատվությունը փոխանցելուց առաջ,

36) պետք է սահմանվեն ֆինանսական դրույթներ՝ ապահովելու, որ փակման և դրան հաջորդող շրջանում ծագող, 2003/87/ԵՀ հրահանգի գործողության տարածումից ծագող, ինչպես նաև սույն Հրահանգին համապատասխան՝ արտահոսքերի կամ էական խախտումների դեպքում ուղղիչ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունները կատարվեն: Անդամ պետություններն ապահովում են, որ հնարավոր օպերատորը

Ֆինանսական պահուստ ձևավորի՝ որպես ֆինանսական ապահովություն կամ որևէ այլ համարժեք երաշխիք, որը կլինի վավեր և կգործի՝ նախքան ներմղման աշխատանքների սկիզբը,

37) ազգային իշխանությունները, պատասխանատվությունն իրենց փոխանցվելուց հետո կարող են ստիպված լինել որոշակի ծախսեր կրել, ինչպես, օրինակ՝ CO₂-ի պահեստավորմանն առնչվող դիտանցման ծախսերը: Ուստի օպերատորը ֆինանսական միջոցները պետք է մատչելի դարձնի իրավասու մարմնի համար՝ նախքան պատասխանատվության փոխանցումը և անդամ պետությունների կողմից որոշվելիք կարգավորումներին համապատասխան: Այդ ֆինանսական միջոցները պետք է բավարար լինեն՝ դիտանցման համար նախատեսվող ծախսերն առնվազն 30 տարվա կտրվածքով ծածկելու համար: Ֆինանսական միջոցների չափը որոշվում է Հանձնաժողովի կողմից ընդունված ուղեցույցների հիման վրա՝ Համայնքում սույն Հրահանգի պահանջների իրականացման հետևողականության ապահովմանն օժանդակելու նպատակով,

38) ածխաթթու գազի փոխադրման ցանցերի և պահեստավորման վայրերի մատչելիությունը, անկախ Միությունում հնարավոր օգտագործողների աշխարհագրական դիրքից, կարող է պայման հանդիսանալ՝ էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի ներքին շուկաներ մուտք գործելու կամ մրցակցային կերպով դրանցում մուտք գործելու համար՝ կախված ածխածնի և ԱԳՈՍՊ-ի համեմատական գներից: Հետևաբար նպատակահարմար է այնպիսի միջոցներ ձեռնարկել, որ դրանք մատչելի դառնան հնարավոր օգտագործողների համար: Այդ գործընթացի իրականացումը կատարվում է յուրաքանչյուր անդամ պետության կողմից սահմանված ընթացակարգին համապատասխան, մատչելիության արդար, բաց և խտրականությունը բացառող նպատակների կիրառմամբ և, մասնավորապես, հաշվի առնելով փոխադրման և պահեստավորման առկա կամ հնարավոր կարողությունները, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերին և Համայնքի օրենսդրությանը համապատասխան ստանձնած՝ երկրում CO₂-ի կրճատման պարտավորությունների մասնաբաժինը, որոնք նախատեսվում է կատարել ԱԳՈՍՊ-ի միջոցով: Ածխաթթու գազի փոխադրման խողովակաշարերը հնարավորության դեպքում պետք է նախագծված լինեն այնպես, որ նպաստեն բաղադրության նվազագույն շեմին համապատասխանող CO₂ հոսքի մատչելիությանը: Անդամ պետությունները պետք է սահմանեն նաև վեճերի կարգավորման մեխանիզմներ՝ ապահովելու համար

ածխաթթու գազի փոխադրման ցանցի և պահեստավորման վայրերի մատչելիության առնչվող վեճերի արագացված լուծումը,

39) անհրաժեշտ են դրույթներ՝ ապահովելու համար, որ անդրսահմանային փոխադրման, անդրսահմանային պահեստավորման վայրերի կամ անդրսահմանային պահեստավորման համալիրների մասով անդամ պետությունների իրավասու մարմինները միաժամանակ բավարարեն սույն Հրահանգի և Համայնքի մյուս ամբողջ օրենսդրության պահանջները,

40) իրավասու մարմինը սահմանում և վարում է տրված պահեստավորման թույլտվությունների, ինչպես նաև բոլոր փակված պահեստավորման վայրերի և շրջակա պահեստավորման համալիրների գրանցամատյան, որը ներառում է իրավասու պետական մարմինների կողմից պլանավորման և ընթացակարգերի իրականացման թույլտվություն տալու համար հաշվի առնվող՝ այդ վայրերի և համալիրների տարածքային ընդգրկմամբ քարտեզները: Գրանցամատյանի մասին տեղեկությունները տրամադրվում են նաև Հանձնաժողովին,

41) անդամ պետությունները սույն Հրահանգի իրականացման մասին հաշվետվությունները ներկայացնում են «Շրջակա միջավայրին վերաբերող որոշ հրահանգների իրականացման մասին հաշվետվությունների ստանդարտացման և ռացիոնալիզացման մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 23-ի 91/962/ԵՏՀ հրահանգին [9] համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից կազմված հարցաթերթիկների հիման վրա,

42) անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգին համապատասխան ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների մասին կանոնները: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

43) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն, որը սահմանում է Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը [10],

44) Հանձնաժողովը, մասնավորապես, պետք է իրավասու լինի փոփոխություններ կատարելու հավելվածում: Քանի որ այդ միջոցառումներն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5(ա) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

45) 85/337/ԵՏՀ հրահանգը պետք է փոփոխվի՝ սույն Հրահանգով նախատեսված ստորերկրյա պահեստավորման նպատակով CO₂-ի հոսքերի որսումն ու փոխադրումը, ինչպես նաև պահեստավորման վայրերը կարգավորելու համար: 2004/35/ԵՀ հրահանգը պետք է փոփոխվի՝ սույն Հրահանգով նախատեսված պահեստավորման վայրերի շահագործումը կարգավորելու նպատակով: 2008/1/ԵՀ հրահանգը պետք է փոփոխվի՝ սույն Հրահանգով նախատեսված օբյեկտներից ստորերկրյա պահեստավորման նպատակով CO₂-ի հոսքերի որսումն ու փոխադրումը կարգավորելու համար,

46) սույն Հրահանգի ընդունումը պետք է շրջակա միջավայրի և մարդու առողջության պաշտպանության բարձր մակարդակ ապահովի CO₂-ի ստորերկրյա պահեստավորման հետևանքով առաջացող ռիսկերից: Այս նպատակով «Թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի 2006/12/ԵՀ հրահանգն ու [11] «Թափոնների փոխադրումների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1013/2006 թվականի կանոնակարգը (ԵՀ) [12] պետք է փոփոխվեն այնպես, որ բացառեն նշված փաստաթղթերի գործողության տարածումը ստորերկրյա պահեստավորման նպատակով որսված և փոխադրված CO₂-ի վրա: Զրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգը նույնպես պետք է փոփոխվի՝ ստորերկրյա պահեստավորման նպատակով աղի գեոթերմալ ջրերի մեջ CO₂-ի ներմղումն ապահովելու համար: Նման ցանկացած ներմղման վրա տարածվում են ստորերկրյա ջրերի պահպանության Համայնքի օրենսդրության դրույթները. ներմղումը պետք է կատարվի 2000/60/ԵՀ հրահանգի 4(1)(բ) հոդվածին ու «Աղտոտումից և որակի վատթարացումից ստորերկրյա ջրերի պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի 2006/118/ԵՀ հրահանգին [14] համապատասխան,

47) ցածր ածխածնային էներգետիկայի անցնելու համար անհրաժեշտ է, որ, օրինակ՝ հանածո վառելիքներից էներգիայի արտադրության դեպքում նոր ներդրումներ կատարվեն՝ արտանետումների էական կրճատումներ ապահովելու նպատակով: Այս նպատակով, «Այրման խոշոր կայաններից որոշ աղտոտող նյութերի՝ դեպի մթնոլորտ արտանետումները նվազեցնելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/80/ԵՀ հրահանգը [15] պետք է փոփոխվի՝ սահմանելով, որ որոշակի հզորությամբ բոլոր այրման կայանները, որոնց շինարարության սկզբնական լիցենզիան կամ շահագործման սկզբնական լիցենզիան

տրվել է սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո, իրենց տարածքում պետք է, համապատասխան պահեստավորման վայրերի առկայության և CO₂-ի փոխադրումն ու դրանցում CO₂-ի որսման սարքավորումներ տեղադրելը տեխնիկապես և տնտեսապես իրատեսական լինելու դեպքում, ունենան CO₂-ի որսման ու սեղմման համար անհրաժեշտ սարքավորումների տեղադրման տարածք: Փոխադրման և տեղադրման տնտեսական հիմնավորվածությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով տվյալ պայմաններում չարտանետված CO₂-ի ակնկալվող ծախսերը՝ տեղադրման դեպքում, ինչպես նաև Համայնքում CO₂-ի քվոտաների ակնկալվող ծախսերը: Կանխատեսումները պետք է հիմնված լինեն ամենաթափուկ տվյալների վրա. պետք է իրականացվի նաև տեխնիկական տարբերակների վերանայում և գնահատման գործընթացներում՝ անորոշությունների վերլուծություն: Իրավասու մարմինը որոշում է նշված պայմանների հետ համապատասխանությունը օպերատորի կողմից իրականացված գնահատման և առկա այլ տվյալների հիման վրա, որոնք մասնավորապես վերաբերում են շրջակա միջավայրի և մարդու առողջության պաշտպանությանը,

48) Հանձնաժողովը 2015 թվականի հունիսի 30-ի դրությամբ պետք է իրականացնի սույն Հրահանգի վերանայում՝ դրա իրականացման սկզբնական շրջանում ձեռք բերված փորձի հիման վրա և համապատասխան առաջարկներ ներկայացնի դրա վերանայման վերաբերյալ,

49) սույն Հրահանգի նպատակը, այն է՝ CO₂-ի բնապահպանական տեսանկյունից անվտանգ պահեստավորման իրավական դաշտ ստեղծելը, առանձին գործող անդամ պետությունների կողմից չի կարող բավարար չափով իրականացվել, և, հետևաբար, իր մասշտաբի և ազդեցության նկատառումներով, առավել լավ կիրականացվի Համայնքի մակարդակում, Համայնքը կարող է միջոցներ որդեգրել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,

50) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [16] խրախուսվում է, որ անդամ պետությունները իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմեն սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակեն դրանք,

51) սույն Հրահանգի կիրառումը չի հակասում Պայմանագրի 87-րդ և 88-րդ հոդվածներին,

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

Կարգավորման առարկան և նպատակը

1. Սույն Հրահանգը սահմանում է ածխաթթու գազի (CO_2) բնապահպանական տեսանկյունից անվտանգ ստորգետնյա պահեստավորման իրավական դաշտ՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարին օժանդակելու համար:
2. CO_2 -ի բնապահպանական տեսանկյունից անվտանգ ստորերկրյա պահեստավորման նպատակը CO_2 -ի մշտական տեղափակումն է այնպես, որ կանխի և, դրա անհնարինության դեպքում, հնարավորինս վերացնի շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունը:

Հոդված 2

Գործողության ոլորտն ու արգելքը

1. Սույն Հրահանգը տարածվում է անդամ պետությունների տարածքում, դրանց բացառիկ տնտեսական գոտիներում և «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իմաստով մայրցամաքային ելունդներում CO_2 -ի ստորգետնյա պահեստավորման վրա:
2. Սույն Հրահանգը չի կիրառվում ընդհանուր 100 կիլոտոննայից պակաս ծավալով CO_2 -ի ստորերկրյա պահեստավորման նկատմամբ, որը ձեռնարկվել է նոր արտադրանքի ու պրոցեսների ուսումնասիրության, զարգացման կամ փորձարկման նպատակով:
3. 1-ին պարբերության մեջ նշված տարածքը գերազանցող պահեստավորման համալիր ունեցող պահեստավորման վայրում CO_2 -ի պահեստավորումը չի թույլատրվում:
4. Զրաայան մեջ CO_2 -ի պահեստավորումը չի թույլատրվում:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1. «CO₂-ի ստորերկրյա պահեստավորում» նշանակում է ստորերկրյա երկրաբանական կազմավորումներում CO₂-ի հոսքերի ներմղում և պահեստավորում.
2. «ջրասյուն» նշանակում է ջրային մարմնում ջրի մակերևույթից մինչև հատակային նստվածքն ընկած ջրի չընդհատվող ուղղաձիգ զանգված.
3. «պահեստավորման վայր» նշանակում է ստորերկրյա կազմավորումում որոշակի տարածք, որն օգտագործվում է CO₂-ի ստորերկրյա պահեստավորման համար, ինչպես նաև հարակից մակերևույթն ու ներմղման կայանքները.
4. «երկրաբանական կազմավորում» նշանակում է լիտոշերտագրական ընդերքի տեղամաս, որն ունի հստակ ժայռային շերտեր և քարտեզագրված է.
5. «արտահոսք» նշանակում է պահեստավորման համալիրից CO₂-ի ցանկացած արտազատում.
6. «պահեստավորման համալիր» նշանակում է պահեստավորման վայր և դրան շրջապատող երկրաբանական տարածք, որը կարող է ազդեցություն ունենալ պահեստավորման ամբողջականության և անվտանգության վրա, այսինքն՝ երկրորդային տեղափակման կազմավորումներ.
7. «հիդրավլիկ միավոր» նշանակում է հիդրավլիկորեն միմյանց հետ կապված և ջրի թողունակություն ունեցող (ծակոտկեն) տարածք, որտեղ ճնշումների փոխկապակցվածությունը կարող է չափվել տեխնիկական միջոցներով և որը սահմանակից է ջրամեկուսիչ հոծ ապարներին, ինչպես օրինակ՝ տեկտոնական խախտումներ, աղային գմբեթներ, լիտոլոգիական (քարաբանական) սահմաններ, կամ չափվել շերտի նեղացմամբ կամ կազմավորման մերկացմամբ.
8. «ընդերքի ուսումնասիրություն» նշանակում է CO₂-ի ստորերկրյա պահեստավորման նպատակով հավանական պահեստավորման համալիրների գնահատում՝ հողի ներքին շերտերում կատարվող աշխատանքների միջոցով, ինչպես, օրինակ՝ հորատման աշխատանքներ՝ հնարավոր պահեստավորման համալիրում շերտի մասին երկրաբանական տվյալներ ձեռք բերելու համար և, համապատասխան դեպքերում, փորձնական ներմղման աշխատանքներ՝ պահեստավորման վայրի հատկությունների մասին տեղեկություններ ստանալու համար.
9. «ընդերքի ուսումնասիրության թույլտվություն» նշանակում է սույն Հրահանգի պահանջների համաձայն իրավասու մարմնի կողմից տրված գրավոր և հիմնավորված որոշում, որով թույլատրվում է իրականացնել ընդերքի ուսումնասիրություն, և որի մեջ նշվում են դրա իրականացման պայմանները.

10. «օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական, մասնավոր կամ պետական հատվածում գործող անձ, որը շահագործում կամ ղեկավարում է օբյեկտը, կամ որին, ազգային օրենսդրությանը համապատասխան, պահեստավորման վայրի տեխնիկական գործառնման մասով հստակ տնտեսական իրավասություններ են տրված.
11. «պահեստավորման թույլտվություն» նշանակում է սույն Հրահանգի պահանջների համաձայն իրավասու մարմնի կողմից տրված գրավոր և հիմնավորված որոշում կամ որոշումներ, որով օպերատորին պահեստավորման վայրում թույլատրվում է իրականացնել CO₂-ի ստորերկրյա պահեստավորում, և որում նշվում են դրա իրականացման պայմանները.
12. «զգալի փոփոխություն» նշանակում է պահեստավորման թույլտվությամբ չնախատեսված շահագործման պայմանների այնպիսի փոփոխություն, որը կարող է բացասական ներգործություն ունենալ շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա.
13. «CO₂-ի հոսքեր» նշանակում է CO₂-ի որսման պրոցեսի արդյունքում առաջացող նյութերի արտահոսք.
14. «թափոններ» նշանակում է 2006/12/ԵՀ հրահանգի 1(1)(ա) հոդվածով որպես թափոն սահմանված նյութեր.
15. «CO₂-ի շլեյֆ» նշանակում է երկրաբանական կազմավորման մեջ CO₂-ի ցրված ծավալը.
16. «միգրացիա» նշանակում է CO₂-ի շարժը պահեստավորման համալիրում.
17. «էական խախտում» նշանակում է ներմղման կամ պահեստավորման աշխատանքներին կամ պահեստավորման համալիրի անվտանգության կանոնների պահպանմանն առնչվող խախտում, որը արտահոսքի կամ շրջակա միջավայրի, կամ մարդու առողջության վրա ներգործության վտանգ է ներառում.
18. «էական վտանգ» նշանակում է վնասի առաջացման հնարավորության և չափերի համադրություն, որը չի կարող անտեսվել առանց տվյալ պահեստավորման վայրի մասով սույն Հրահանգի նպատակը հարցականի տակ դնելու.
19. «ուղղիչ միջոցներ» նշանակում է էական խախտումները վերացնելուն կամ արտահոսքը կանխարգելելուն ուղղված ցանկացած միջոց՝ պահեստավորման համալիրից CO₂-ի արտազատումը կանխելու կամ դադարեցնելու նպատակով.
20. պահեստավորման վայրի «փակում» նշանակում է տվյալ պահեստավորման վայր CO₂-ի ներմղման աշխատանքների վերջնական դադարեցում.

21. «փակմանը հաջորդող ժամանակահատված» նշանակում է պահեստավորման վայրի փակմանը հաջորդող ժամանակահատված՝ ներառյալ պատասխանատվությունը իրավասու մարմնին փոխանցելուն հաջորդող ժամանակահատված:

22. «փոխադրման ցանց» նշանակում է պահեստավորման վայր CO_2 -ի փոխադրման համար նախատեսված խողովակաշարերի ցանց՝ ներառյալ հարակից կայանքները:

ԳԼՈՒԽ 2

ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

Պահեստավորման վայրերի ընտրությունը

1. Սույն Հրահանգի պահանջներին համապատասխան՝ անդամ պետություններն իրենց իրավունք են վերապահում իրենց տարածքում որոշելու այն վայրերը, որտեղ կարող է պահեստավորվել ածխաթթու գազը: Դա ներառում է անդամ պետությունների՝ իրենց ամբողջ տարածքում կամ դրա մի մասում պահեստավորումը չթույլատրելու իրավունքը:

2. Այն անդամ պետությունները, որոնք նախատեսում են իրենց տարածքում թույլատրել CO_2 -ի ստորերկրյա պահեստավորման աշխատանքներ, պետք է գնահատեն իրենց ամբողջ տարածքի կամ դրա որոշ մասերի պահեստավորման կարողությունները՝ թույլատրելով նաև ընդերքի ուսումնասիրության իրականացումը՝ 5-րդ հոդվածին համապատասխան: Հանձնաժողովն այդ անդամ պետությունների միջև կարող է կազմակերպել տեղեկությունների և լավագույն փորձի փոխանակում՝ 27-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունների փոխանակման համատեքստում:

3. Երկրաբանական կազմավորման՝ որպես պահեստավորման վայր օգտագործելու պիտանելիությունը, որոշվում է հավանական պահեստավորման համալիրն ու շրջակա տարածքը բնութագրելու և գնահատելու միջոցով՝ I հավելվածում նշված չափորոշիչներին համապատասխան:

4. Երկրաբանական կազմավորումն ընտրվում է որպես պահեստավորման վայր միայն այն դեպքում, երբ օգտագործման առաջարկվող պայմանները արտահոսքի էական վտանգ չեն առաջացնում, և եթե առկա չեն մարդու առողջության ու շրջակա միջավայրի վրա ներգործության էական վտանգներ:

Հոդված 5

Ընդերքի ուսումնասիրության թույլտվությունները

1. Եթե անդամ պետությունները որոշում են, որ պահանջվում է ընդերքի ուսումնասիրություն՝ 4-րդ հոդվածին համապատասխան պահեստավորման վայրերի ընտրության համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով, ապա դրանք պետք է ապահովեն, որ ընդերքի ուսումնասիրությունը չիրականացվի առանց համապատասխան թույլտվության:

Համապատասխան դեպքերում, ներմղման փորձարկումների դիտանցման իրավունքը կարող է ներառվել ընդերքի ուսումնասիրության թույլտվության մեջ:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ անհրաժեշտ կարողություններ ունեցող բոլոր անձինք կարողանան դիմել ընդերքի ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար, և որ այդ թույլտվությունները տրվում կամ մերժվում են անկողմնակալ, հրապարակային ու խտրականությունը բացառող չափանիշների հիման վրա:

3. Ընդերքի ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը չպետք է գերազանցի ընդերքի համապատասխան ուսումնասիրության անցկացման համար անհրաժեշտ ժամկետը: Այդուհանդերձ, անդամ պետությունները կարող են երկարաձգել ընդերքի ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը, եթե սահմանված ժամկետը բավարար չէ՝ տվյալ ընդերքի ուսումնասիրությունն իրականացնելու համար, և եթե ընդերքի ուսումնասիրությունն իրականացվել է թույլտվության պայմաններին համապատասխան: Ընդերքի ուսումնասիրության թույլտվությունները տրվում են սահմանափակ տարածքի համար:

4. Ընդերքի ուսումնասիրության թույլտվություն ունեցող անձը CO₂-ի պահեստավորման տվյալ վայրի ուսումնասիրության բացառիկ իրավունք ունի: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ թույլտվության գործողության ժամկետի ընթացքում տվյալ համալիրն այլ նպատակներով չօգտագործվի:

ԳԼՈՒԽ 3

ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 6

Պահեստավորման թույլտվությունները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ որևէ պահեստավորման վայր չչափագործվի առանց համապատասխան թույլտվության, որ յուրաքանչյուր պահեստավորման վայր ունենա միայն մեկ օպերատոր և որ տվյալ վայրն այլ նպատակներով չօգտագործվի:
2. Անդամ պետություններն ապահովում են, որ անհրաժեշտ կարողություններ ունեցող ցանկացած անձ կարող է դիմել պահեստավորման թույլտվություն ստանալու համար, և որ այդ թույլտվությունները տրվում կամ մերժվում են անկողմնակալ, հրապարակային ու թափանցիկ չափանիշների հիման վրա:
3. Չհակասելով սույն Հրահանգի պահանջներին՝ որոշակի պահեստավորման վայրի համար պահեստավորման թույլտվություն տալիս նախապատվությունը տրվում է այդ վայրի համար ընդերքի ուսումնասիրության թույլտվություն ունեցող անձին՝ պայմանով, որ այդ վայրի ընդերքի ուսումնասիրությունն ավարտված է, թույլտվությամբ նախատեսված բոլոր պայմանները կատարված են և, որ պահեստավորման թույլտվություն ստանալու դիմումը ներկայացված է ընդերքի ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետի ընթացքում: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ թույլտվությունն ստանալու ժամանակահատվածում համալիրն այլ նպատակներով չի օգտագործվում:

Հոդված 7

Պահեստավորման թույլտվություն ստանալու դիմումները

Պահեստավորման թույլտվություն ստանալու համար իրավասու մարմին ներկայացվող դիմումները պետք է առնվազն ներառեն հետևյալ տեղեկությունները՝

1. հավանական օպերատորի անվանումն ու հասցեն,
2. ապացույցներ՝ հավանական օպերատորի տեխնիկական կարողությունների մասին,

3. պահեստավորման վայրի և պահեստավորման համալիրի բնութագիրն ու պահեստավորման անվտանգության գնահատումը՝ 4(3) և (4) հոդվածին համապատասխան,
4. ներմղման և պահեստավորման ենթակա CO₂-ի ընդհանուր քանակը, ինչպես նաև հավանական աղբյուրներն ու փոխադրման մեթոդները, CO₂-ի հոսքերի բաղադրությունը, ներմղման ծավալներն ու ճնշումները և ներմղման կայանքների տեղակայումը,
5. էական խախտումների կանխմանն ուղղված միջոցների նկարագիրը,
6. առաջարկվող դիտանցման ծրագիրը՝ 13(2) հոդվածին համապատասխան,
7. առաջարկվող ուղղիչ միջոցների ծրագիրը՝ 16(2) հոդվածին համապատասխան,
8. ժամանակավոր փակմանը հաջորդող ժամկետի ընթացքում իրականացվելիք միջոցների առաջարկվող ծրագիրը՝ 17(3) հոդվածին համապատասխան,
9. 85/337/ԵՏՀ հրահանգի 5-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող տեղեկությունները,
10. ապացույց, որ 19-րդ հոդվածով պահանջվող ֆինանսական ապահովությունը կամ այլ համարժեք երաշխիք վավեր կլինի և կգործի՝ նախքան ներմղման աշխատանքների սկիզբը:

Հոդված 8

Պահեստավորման թույլտվություն ստանալու պայմանները

Իրավասու մարմինը պահեստավորման թույլտվությունը տալիս է միայն այն դեպքում, եթե ապահովվել են հետևյալ պայմանները.

1. իրավասու մարմինը, 7-րդ հոդվածին համապատասխան ներկայացված դիմումի և ցանկացած այլ տեղեկության հիման վրա, հավաստել է, որ՝
 - ա) կատարված են սույն Հրահանգի և Համայնքի համապատասխան օրենսդրության պահանջները.
 - բ) օպերատորը համապատասխան ֆինանսական ու տեխնիկական կարողություններ ունի ու վստահելի է՝ պահեստավորման վայրը շահագործելու և ղեկավարելու համար, և, որ ապահովված է օպերատորի և դրա անձնակազմի մասնագիտական և տեխնիկական զարգացումն ու վերապատրաստումը.

գ) նույն հիդրավլիկական միավոր մեջ մեկից ավելի պահեստավորման վայրերի առկայության դեպքում հավանական փոխկապակցվածությունն այնպիսին է, որ երկու վայրը միաժամանակ կարող է բավարարել սույն Հրահանգի պահանջները:

2. Իրավասու մարմինը հաշվի է առել Հանձնաժողովի ցանկացած եզրակացություն՝ 10-րդ հոդվածին համապատասխան տրված թույլտվության նախագծի վերաբերյալ:

Հոդված 9

Պահեստավորման թույլտվության բովանդակությունը

Թույլտվությունը ներառում է առնվազն հետևյալը՝

1. օպերատորի անվանումն ու հասցեն.
2. պահեստավորման վայրի և պահեստավորման համալիրի հստակ տեղն ու սահմանները և հիդրավլիկ միավորի մասին տեղեկությունները.
3. պահեստավորման իրականացման պահանջները, ստորերկրյա պահեստավորման համար թույլատրվող CO₂-ի ընդհանուր ծավալները, պահեստում առկա ճնշման չափերը և ներմղման առավելագույն ծավալներն ու առավելագույն ճնշումները.
4. CO₂-ի հոսքի բաղադրության պահանջները և CO₂-ի հոսքի կլանման ընթացակարգը՝ 12-րդ հոդվածին համապատասխան, և, անհրաժեշտության դեպքում, ներմղման և պահեստավորմանը ներկայացվող լրացուցիչ պահանջները՝ մասնավորապես էական խախտումները կանխելու նպատակով.
5. հաստատված դիտանցման ծրագիրը, դրա իրականացման պարտավորությունը և 15-րդ հոդվածին համապատասխան՝ այն թարմացնելու պահանջները, ինչպես նաև 14-րդ հոդվածին համապատասխան հաշվետվողականության պահանջները.
6. արտահոսքի կամ էական խախտման դեպքում իրավասու մարմնին տեղեկացնելու պահանջը, ուղղիչ միջոցների ծրագրի հաստատված տարբերակը և արտահոսքի կամ էական խախտման դեպքում ուղղիչ միջոցների ծրագրի իրականացման պարտավորությունը՝ 16-րդ հոդվածին համապատասխան.
7. 17-րդ հոդվածում նշված պահեստավորման վայրի փակման պայմաններն ու ժամանակավոր փակմանը հաջորդող ժամկետի ընթացքում իրականացվելիք միջոցների հաստատված ծրագիրը.
8. 11-րդ հոդվածին համապատասխան՝ պահեստավորման թույլտվության փոփոխությանը, գործողության ժամկետի վերանայմանը, երկարաձգմանը և դադարեցմանն առնչվող դրույթները.

9. 19-րդ հոդվածին համապատասխան՝ ֆինանսական ապահովության կամ որևէ այլ համարժեք երաշխիքի ստեղծման և պահպանման պահանջը:

Հոդված 10

Պահեստավորման թույլտվության նախագծերի վերանայումը Հանձնաժողովի կողմից

1. Անդամ պետությունները թույլտվություն ստանալու դիմումները Հանձնաժողով են ներկայացնում դրանք ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Նրանք տրամադրում են նաև այլ համապատասխան նյութեր, որոնք պահեստավորման թույլտվություն տալու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմինը պետք է հաշվի առնի: Նրանք Հանձնաժողովին տեղեկացնում են պահեստավորման թույլտվության բոլոր նախագծերի մասին և ցանկացած այլ նյութերի մասին, որոնք նախնական որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվեն: Պահեստավորման թույլտվության նախագծի ստացումից հետո չորս ամսվա ընթացքում Հանձնաժողովը կարող է դրա վերաբերյալ պարտադիր բնույթ չունեցող եզրակացություն տալ: Եթե հանձնաժողովը որոշում է եզրակացություն չտալ, ապա այն անդամ պետություններին մեկ ամսվա ընթացքում տեղեկացնում է թույլտվության նախագիծը ներկայացնելու մասին և ներկայացնում իր հիմնավորումները:

2. Իրավասու մարմինը հարցի վերաբերյալ վերջնական որոշման մասին ծանուցում է Հանձնաժողովին և, եթե այն տարբերվում է Հանձնաժողովի եզրակացությունից, հիմնավորում է այն:

Հոդված 11

Պահեստավորման թույլտվության փոփոխությունը, վերանայումը, դրանում լրացում կատարելը և դադարեցումը

1. Օպերատորը իրավասու մարմնին տեղեկացնում է պահեստավորման վայրի շահագործման ծրագրված փոփոխությունների՝ ներառյալ օպերատորի փոփոխության մասին:

Իրավասու մարմինը հարկ եղած դեպքում պետք է լրացումներ կատարի թույլտվության մեջ կամ դրանով նախատեսված պայմաններում:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ առանց սույն Հրահանգին համապատասխան տրված նոր կամ լրացված պահեստավորման թույլտվության, էական փոփոխություններ չկատարվեն: Նման դեպքերում կիրառվում է 85/337/ԵՏՀ հրահանգի II հավելվածի 13-րդ կետի առաջին պարբերությո՜ւթ:

3. Իրավասու մարմինը վերանայում և անհրաժեշտության դեպքում երկարաձգում կամ, որպես վերջին միջոց, դադարեցնում է պահեստավորման թույլտվությունը.

ա) եթե նրան ծանուցել են կամ նա տեղեկացել է 16(1) հոդվածին համապատասխան որևէ արտահոսքի կամ էական խախտման մասին.

բ) եթե 14-րդ հոդվածին համապատասխան ներկայացված հաշվետվությունների կամ 15-րդ հոդվածին համապատասխան անցկացված բնապահպանական տեսչական ստուգումների արդյունքում պարզվել է, որ չեն բավարարվել թույլտվությամբ նախատեսված պահանջները կամ առկա է արտահոսքի կամ էական խախտման վտանգ.

գ) եթե նա տեղյակ է, որ օպերատորը որևէ այլ կերպ խախտել է թույլտվության պայմանները.

դ) եթե դա անհրաժեշտ է՝ ամենաթարմ գիտական տեղեկություններից ելնելով և տեխնոլոգիական առաջընթացի նկատառումներով, կամ

ե) չհակասելով (ա)–(դ) կետերին՝ թույլտվությունը տալուց հինգ տարի հետո և դրանից հետո յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ:

4. Երրորդ պարբերության համապատասխան թույլտվությունը դադարեցնելուց հետո իրավասու մարմինը կամ տալիս է նոր պահեստավորման թույլտվություն կամ փակում է պահեստավորման վայրը՝ 17(1)(գ) հոդվածին համապատասխան: Նախքան նոր պահեստավորման թույլտվություն տալը, իրավասու մարմինը ժամանակավորապես ստանձնում է կլանման չափանիշներին առնչվող բոլոր իրավական պարտավորությունները, եթե որոշում է շարունակել CO₂-ի ներմղումը, դիտանցումը և ուղղիչ միջոցների կիրառումը՝ սույն Հրահանգով սահմանված պահանջներին համապատասխան, 2003/87/ԵՀ հրահանգին համապատասխան արտահոսքի դեպքերում քվտաների գիջումը, ինչպես նաև կանխարգելիչ և վնասի վերացման գործողությունները՝ 2004/35/ԵՀ հրահանգի 5(1) և 6(1) հոդվածներին համապատասխան: Իրավասու մարմինը կրած բոլոր ծախսերը գանձում է նախկին օպերատորից, այդ թվում՝ օգտվելով 19-րդ հոդվածում նշված ֆինանսական ապահովության միջոցից: 17(1)(գ) հոդվածին համապատասխան՝ պահեստավորման վայրի փակման դեպքում կիրառվում է 17(4) հոդվածը:

ԳԼՈՒԽ 4

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ՓԱԿՄԱՆ ԵՎ ՓԱԿՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 12

CO₂-ի հոսքի կլանման չափանիշներն ու ընթացակարգը

1. CO₂-ի հոսքի բաղադրությունը հիմնականում պետք է պարունակի ածխաթթու գազ: Այս նպատակով, դրանում չպետք է ներառվեն թափոններ կամ այլ նյութեր՝ վերջիններիս հեռացման նպատակով: Այդուհանդերձ, CO₂-ի հոսքը կարող է պարունակել աղբյուրից, որսման և ներմղման պրոցեսում արտանետված չնախատեսված հարակից նյութեր և հետագծման միկրոտարրեր, որոնք ավելացվում են՝ միգրացիայի դիտանցմանը և ստուգմանը օժանդակելու համար: Բոլոր չնախատեսված և ավելացված նյութերը պետք է չգերազանցեն այն մակարդակները, որոնք՝

ա) կարող են բացասական ազդեցություն ունենալ պահեստավորման վայրի ամբողջականության կամ համապատասխան փոխադրման ենթակառուցվածքների վրա.

բ) էական վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի կամ մադու առողջության համար, կամ

գ) խախտում են Համայնքի կիրառելի օրենսդրության պահանջները:

2. Հանձնաժողովը, համապատասխան դեպքում, ընդունում է ուղեցույցներ՝ նպաստելու ըստ դեպքերի կիրառվող պայմանների բացահայտմանը՝ 1-ին պարբերությամբ սահմանված չափանիշները բավարարելու համար:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ օպերատորը՝

ա) կլանի և ներմղի CO₂-ի հոսքերը միայն այն դեպքում, եթե իրականացվել է հոսքերի բաղադրության՝ ներառյալ դրանում առկա կերամաշող նյութերի վերլուծություն, ինչպես նաև ռիսկերի գնահատում, և եթե դրա արդյունքում պարզվել է, որ աղտոտման մակարդակները համապատասխանում են 1-ին պարբերության մեջ նշված պայմաններին.

բ) վարի մատակարարված և ներմղված CO₂-ի հոսքերի ծավալների և հատկանիշների՝ ներառյալ այդ հոսքերի բաղադրության գրանցամատյանը:

Հոդված 13

Դիտանցումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ օպերատորն իրականացնի ներմղման կայանքների, պահեստավորման համալիրի (հնարավորության դեպքում նաև CO₂-ի շլեյֆի) դիտանցում, և հնարավորության դեպքում շրջակա միջավայրի դիտանցում հետևյալ նպատակներով՝

ա) պահեստավորման վայրում CO₂-ի և կառուցվածքում առկա ջրերի իրական ու կանխատեսված վարքագծի համեմատություն.

բ) էական խախտումների բացահայտում.

գ) CO₂-ի միգրացիայի բացահայտում.

դ) CO₂-ի արտահոսքի բացահայտում.

ե) շրջակա միջավայրի, մասնավորապես քաղցրահամ ջրի, բնակչության կամ շրջակա կենսոլորտից օգտվողների վրա էական բացասական ազդեցության բացահայտում.

զ) 16-րդ հոդվածին համապատասխան ձեռնարկված ուղղիչ միջոցների արդյունավետության գնահատում.

է) կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքում պահեստավորման համալիրի անվտանգության և ամբողջականության գնահատման արդյունքների թարմացում, այդ թվում՝ պահեստավորված CO₂-ի ամբողջական և մշտական տեղափակման գնահատում:

2. Դիտանցումն իրականացվում է II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան օպերատորի կողմից մշակված դիտանցման ծրագրի, ինչպես նաև 2003/87/ԵՀ հրահանգի 14-րդ և 23(2) հոդվածներին համապատասխան սահմանված ուղեցույցներին համապատասխան դիտանցման մանրամասների հիման վրա, որոնք ներկայացվել են իրավասու մարմին և հաստատվել նրա կողմից՝ սույն Հրահանգի 7(6) և 9(5) հոդվածներին համապատասխան: Ծրագիրը թարմացվում է սահմանված պահանջներին համապատասխան և, ցանկացած դեպքում, յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ արտահոսքի, շրջակա միջավայրի և մարդու առողջությանը սպառնացող գնահատված ռիսկերի փոփոխությունները, գիտական նոր տվյալները և առկա լավագույն տեխնոլոգիաներում բարելավումները հաշվի առնելու համար: Թարմացված ծրագրերը պետք է կրկին ներկայացվեն իրավասու մարմնի հաստատմանը:

Հոդված 14

Օպերատորի կողմից հաշվետվություններ ներկայացնելը

Իրավասու մարմնի կողմից որոշված պարբերականությամբ և, ցանկացած դեպքում, տարին առնվազն մեկ անգամ, օպերատորը իրավասու մարմին է ներկայացնում՝

1. հաշվետու ժամանակահատվածում 13-րդ հոդվածին համապատասխան դիտանցման բոլոր արդյունքները, այդ թվում՝ կիրառվող դիտանցման մեթոդների մասին տեղեկությունները.
2. հաշվետու ժամանակահատվածում մատակարարված և ներմդված CO₂-ի այն հոսքերի ծավալներն ու հատկանիշները, այդ թվում՝ այդ հոսքերի բաղադրությունը, որոնք գրանցվել են 12(3)(բ) հոդվածին համապատասխան.
3. 19-րդ և 9(9) հոդվածներին համապատասխան ֆինանսական ապահովության հատկացման և պահպանման ապացույց.
4. ցանկացած այլ տեղեկություն, որը իրավասու մարմինն անհրաժեշտ է համարում՝ պահեստավորման թույլտվության պայմանների հետ համապատասխանությունը գնահատելու և պահեստավորման վայրում CO₂-ի վարքագծի վերաբերյալ նոր գիտելիքների ստացման նպատակով:

Հոդված 15

Տեսչական ստուգումները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինները կազմակերպեն սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ մտնող բոլոր պահեստավորման համալիրների ընթացիկ և ոչ ընթացիկ տեսչական ստուգումներ՝ սույն Հրահանգի պահանջներին համապատասխանությունը ստուգելու և խթանելու և շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա ազդեցության դիտանցման նպատակով:
2. Տեսչական ստուգումները ներառում են այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ստուգայցերը վերգետնյա օբյեկտներ, այդ թվում՝ ներմդման կայանքներ, ինչպես նաև օպերատորի կողմից իրականացվող ներմդման և դիտանցման գործողությունների գնահատում ու օպերատորի կողմից վարվող բոլոր անհրաժեշտ տվյալների ստուգում:
3. Ընթացիկ տեսչական ստուգումներն իրականացվում են տարին առնվազն մեկ անգամ՝ պահեստավորման վայրի փակումից հետո երեք տարվա ընթացքում, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ նախքան

պատասխանատվության փոխանցումը իրավասու մարմինին: Իրավասու մարմինները գննում են համապատասխան ներմղման և դիտանցման կայանքները, ինչպես նաև շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա պահեստավորման համալիրի ունեցած բոլոր ազդեցությունները:

4. Ոչ ընթացիկ տեսչական ստուգումներն իրականացվում են՝

ա) եթե իրավասու մարմինն ծանուցել են կամ այն տեղեկացել է 16(1) հոդվածին համապատասխան որևէ արտահոսքի կամ էական խախտման մասին.

բ) եթե 14-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող հաշվետվություններից պարզ է դառնում, որ թույլտվության պայմանները բավարար չափով չեն կատարվել.

գ) շրջակա միջավայրին կամ մարդու առողջությանն առնչվող լուրջ բողոքները հետաքննելու համար.

դ) այլ իրավիճակներում, եթե այդպես է գտնում իրավասու մարմինը:

5. Յուրաքանչյուր տեսչական ստուգումից հետո իրավասու մարմինը հաշվետվություն է պատրաստում տեսչական ստուգման արդյունքների վերաբերյալ: Հաշվետվությունը գնահատում է սույն Հրահանգի պահանջների հետ համապատասխանությունը և տեղեկացնում հետագա գործողությունների անհրաժեշտության մասին: Տեսչական ստուգումից հետո երկու ամսվա ընթացքում հաշվետվությունը ներկայացվում է համապատասխան օպերատորին և մատչելի դարձվում հանրությանը՝ Համայնքի համապատասխան օրենսդրության համաձայն:

Հոդված 16

Արտահոսքերի և էական խախտումների դեպքում ձեռնարկվող միջոցները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ արտահոսքերի կամ էական խախտումների դեպքում օպերատորն անմիջապես ծանուցի իրավասու մարմինն և ձեռնարկի անհրաժեշտ ուղղիչ միջոցներ, այդ թվում՝ մարդու առողջության պաշտպանությանն առնչվող միջոցներ: Արտահոսքերի և էական խախտումների դեպքերում, որոնք արտահոսքի վտանգ են պարունակում, օպերատորը ծանուցում է նաև իրավասու մարմինն՝ 2003/87/ԵՀ հրահանգին համապատասխան:

2. Առաջին պարբերության մեջ նշված ուղղիչ միջոցները ձեռնարկվում են առնվազն իրավասու մարմինն ներկայացված և դրա կողմից հաստատված՝ ուղղիչ միջոցների ծրագրի հիման վրա՝ 7(7) և 9(6) հոդվածներին համապատասխան:

3. Իրավասու մարմինը կարող է ցանկացած ժամանակ օպերատորից պահանջել անհրաժեշտ ուղղիչ միջոցներ ձեռնարկել, ինչպես նաև այնպիսի միջոցներ, որոնք ուղղված են մարդու առողջության պաշտպանությանը: Դրանք կարող են լրացնել ուղղիչ միջոցների ծրագրում նախատեսվածներին կամ տարբեր լինել դրանցից: Իրավասու մարմինն ինքը նաև կարող է ցանկացած ժամանակ ուղղիչ միջոցներ ձեռնարկել:
4. Եթե օպերատորը չի ձեռնարկում անհրաժեշտ ուղղիչ միջոցները, իրավասու մարմինն ինքն է ձեռնարկում անհրաժեշտ ուղղիչ միջոցները:
5. Իրավասու մարմինը 3-րդ և 4-րդ պարբերություններում նշված միջոցների իրականացման համար կրած ծախսերը գանձում է օպերատորից, այդ թվում՝ օգտվելով 19-րդ հոդվածով սահմանված ֆինանսական ապահովության միջոցից:

Հոդված 17

Փակմանն ու փակմանը հաջորդող ժամանակաշրջանին առնչվող պարտավորությունները

1. Պահեստավորման վայրը փակվում է՝
- ա) եթե կատարված են թույլտվության մեջ նշված համապատասխան պայմանները.
 - բ) օպերատորի հիմնավորված դիմումի հիման վրա՝ իրավասու մարմնի թույլտվությամբ, կամ
 - գ) եթե իրավասու մարմինը նման որոշում է կայացնում 11(3) հոդվածին համապատասխան պահեստավորման թույլտվության գործողության դադարեցումից հետո:
2. Այն բանից հետո, երբ պահեստավորման վայրը փակվում է 1-ին պարբերության (ա) կամ (բ) կետերին համապատասխան, օպերատորը շարունակում է պատասխանատվություն կրել դիտանցման, հաշվետվությունները ներկայացնելու և ուղղիչ միջոցների համար՝ սույն Հրահանգով սահմանված պահանջներին համապատասխան, ինչպես նաև 2003/87/ԵՀ հրահանգին համաձայն արտահոսքերի դեպքերում քվտաների զիջմանը, 2004/35/ԵՀ հրահանգի 5-րդ և 6-րդ հոդվածներին համաձայն կանխարգելիչ և վնասի վերացման գործողություններին առնչվող բոլոր պարտավորությունների համար՝ մինչև պահեստավորման վայրի մասով պատասխանատվությունը սույն Հրահանգի 18(1)-(5) հոդվածի համաձայն անցնում է իրավասու մարմնին: Օպերատորը պատասխանատու է նաև պահեստավորման վայրի կոնսերվացման և ներմղման կայանքների ապամոնիտաժման համար:

3. Երկրորդ պարբերության մեջ նշված պարտավորությունները կատարվում են փակմանը հաջորդող ժամանակահատվածի համար օպերատորի կողմից կազմված ծրագրի հիման վրա՝ հաշվի առնելով այդ ոլորտի լավագույն փորձը և II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան: Փակմանը հաջորդող ժամանակահատվածի ընթացքում իրականացվելիք միջոցների ժամանակավոր ծրագիրը ներկայացվում է իրավասու մարմին և հաստատվում նրա կողմից՝ 7(8) և 9(7) հոդվածների համաձայն: Սույն հոդվածի 1-ին պարբերության (ա) կամ (բ) կետերի համաձայն պահեստավորման վայրի փակումից առաջ, փակմանը հաջորդող ժամանակահատվածի ընթացքում իրականացվելիք միջոցառումների ժամանակավոր ծրագիրը՝

ա) թարմացվում է ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով ռիսկերի վերլուծությունը, լավագույն փորձն ու տեխնոլոգիական առաջընթացը.

բ) ներկայացվում է իրավասու մարմնի հաստատմանը, և

գ) իրավասու մարմնի կողմից հաստատվում է որպես փակմանը հաջորդող ժամանակահատվածի ընթացքում իրականացվելիք միջոցառումների վերջնական ծրագիր:

4. Պահեստավորման վայրի՝ 1(գ) պարբերության համաձայն փակվելուց հետո իրավասու մարմինը պատասխանատու է սույն Հրահանգով սահմանված պահանջների համաձայն դիտանցումն ու ուղղիչ միջոցներն իրականացնելու համար և 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն արտահոսքերի դեպքերում քվոտաների զիջմանն առնչվող պարտավորությունների, ինչպես նաև 2004/35/ԵՀ հրահանգի 5(1) և 6(1) հոդվածների համաձայն կանխարգելիչ ու վնասի վերացման գործողությունների համար: Սույն Հրահանգի համաձայն փակմանը հաջորդող ժամկետին առնչվող պահանջները իրավասու մարմինը կատարում է սույն Հոդվածում նշված՝ փակմանը հաջորդող ժամանակահատվածի ընթացքում իրականացվելիք միջոցառումների ժամանակավոր ծրագրի հիման վրա, որն ըստ անհրաժեշտության թարմացվում է:

5. Իրավասու մարմինը 4-րդ պարբերություններում նշված միջոցների իրականացման համար կրած ծախսերը գանձում է օպերատորից, այդ թվում՝ օգտվելով 19-րդ հոդվածով սահմանված ֆինանսական ապահովության միջոցից:

Պատասխանատվության փոխանցումը

1. Եթե պահեստավորման վայրը փակվել է 17(1) հոդվածի (ա) կամ (բ) կետերի համաձայն, ապա սույն Հրահանգով սահմանված պահանջների համաձայն իրականացվող դիտանցմանն ու ուղղիչ միջոցներին, 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն արտահոսքերի դեպքերում քվտաների զիջման և 2004/35/ԵՀ հրահանգի 5(1) և 6(1) հոդվածների համաձայն կանխարգելիչ և վնասի վերացման գործողություններին առնչվող բոլոր իրավական պարտավորություններն իրավասու մարմնի նախաձեռնությամբ կամ օպերատորի դիմումի հիման վրա փոխանցվում են իրավասու մարմնին, եթե ապահովված են հետևյալ պայմանները.

ա) առկա բոլոր տվյալները ցույց են տալիս, որ պահեստավորված CO₂-ն ամբողջովին և մշտապես տեղափակված է.

բ) իրավասու մարմնի կողմից սահմանվող նվազագույն ժամկետը լրացել է: Այս նվազագույն ժամկետը չպետք է լինի 20 տարուց պակաս, եթե իրավասու մարմինը համոզված չէ, որ (ա) կետում նշված չափորոշիչը բավարարված է՝ նախքան այդ ժամկետը լրանալը.

գ) 20-րդ հոդվածում նշված ֆինանսական պարտավորությունները կատարված են.

դ) պահեստավորման վայրը կոնսերվացված է և ներմղման կայանքները ապամոնիտավորված են:

2. Օպերատորը հաշվետվություն է պատրաստում, որտեղ նշվում է, որ 1(ա) պարբերության մեջ նշված պայմանները բավարարված են, և այն ներկայացնում է իրավասու մարմին՝ պատասխանատվության փոխանցումը հաստատելու համար: Այդ հաշվետվության մեջ պետք է մատնանշվի, որ՝

ա) ներմղված CO₂-ի իրական և կանխատեսված վարքագծերը համապատասխանում են միմյանց.

բ) բացակայում է որևէ տեսանելի արտահոսք.

գ) պահեստավորման վայրում իրավիճակն այնպիսին է, որ երաշխավորում է երկարաժամկետ կայուն վիճակ:

Հանձնաժողովը կարող է առաջին ենթապարբերության (ա), (բ) և (գ) կետերում նշված հարցերի գնահատման ուղեցույցներ ընդունել, որոնք 1(բ) պարբերությունում նշված նվազագույն ժամկետների սահմանման համար անհրաժեշտ տեխնիկական չափորոշիչների վերաբերյալ ցուցումներ կպարունակեն:

3. Եթե իրավասու մարմինը վստահ է, որ 1-ին պարբերության (ա) և (բ) կետերում նշված պայմանները բավարարված են, ապա պատրաստում է պատասխանատվության փոխանցումը հաստատող որոշման նախագիծ: Որոշման նախագծում պետք է նշվի 1(դ) պարբերությունում նշված պայմանների բավարարումը որոշելու մեթոդը, ինչպես նաև պահեստավորման վայրի կոնսերվացմանը և ներմղման կայանքների ապամոնիտաժմանը վերաբերող թարմացված պահանջները:

Եթե իրավասու մարմինը որոշում է, որ 1-ին պարբերության (ա) և (բ) կետերում նշված պայմանները չեն բավարարվել, ապա օպերատորին հիմնավորում է իր որոշումը:

4. Անդամ պետությունները 2-րդ պարբերության մեջ նշված հաշվետվությունը Հանձնաժողով են ներկայացնում այն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Նրանք ներկայացնում են նաև այլ հարակից նյութեր, որոնք իրավասու մարմինը պատասխանատվության փոխանցումը հաստատող որոշման նախագիծը պատրաստելիս պետք է հաշվի առնի: Դրանք Հանձնաժողովին տեղեկացնում են 3-րդ պարբերության համաձայն իրավասու մարմնի կողմից պատրաստված բոլոր հաստատման որոշումների նախագծերի մասին՝ ներառյալ ցանկացած այլ նյութ, որը հաշվի է առնվել եզրակացության հանգեկիս: Որոշման նախագծի ստացումից հետո չորս ամսվա ընթացքում Հանձնաժողովը կարող է դրա վերաբերյալ պարտադիր բնույթ չունեցող եզրակացություն տալ: Եթե Հանձնաժողովը որոշում է եզրակացություն չտալ, ապա այն անդամ պետություններին մեկամսյա ժամկետում տեղեկացնում է որոշման նախագիծը ներկայացնելու մասին և տրամադրում ներկայացնում իր հիմնավորումները:

5. Եթե իրավասու մարմինը վստահ է, որ 1-ին պարբերության (ա)-(դ) կետերում նշված պայմանները բավարարված են, այն վերջնական որոշում է ընդունում և դրա մասին ծանուցում օպերատորին: Իրավասու մարմինը վերջնական որոշման մասին ծանուցում է Հանձնաժողովին և, եթե այն տարբերվում է Հանձնաժողովի եզրակացությունից, հիմնավորում է այն:

6. Պատասխանատվության փոխանցումից հետո 15(3) հոդվածով նախատեսված ընթացիկ տեսչական ստուգումները դադարեցվում են և դիտանցումը սահմանափակվում է այնքանով, որ հնարավոր լինի բացահայտել արտահոսքերը կամ էական խախտումները: Եթե բացահայտվում են որևէ արտահոսքեր կամ էական խախտումներ, դիտանցումը պետք է ակտիվացվի ըստ անհրաժեշտության՝ խնդրի մասշտաբը և ուղղիչ միջոցների արդյունավետությունը գնահատելու նպատակով:

7. Եթե խնդիրն առաջացել է օպերատորի մեղքով՝ ներառյալ թերի տվյալների տրամադրման, համապատասխան տեղեկությունների քղարկման, անփութության,

դիտավորյալ խաբեության կամ ոչ բարեխիղճ մոտեցման դեպքերը, իրավասու մարմինը նախկին օպերատորից գանձում է պատասխանատվության փոխանցումից հետո կրած ծախսերը: Չհակասելով 20-րդ հոդվածին՝ պատասխանատվության փոխանցումից հետո կրած ծախսերի համար օպերատորից փոխհատուցում այլևս չի գանձվում:

8. Այն դեպքերում, երբ պահեստավորման վայրը 17(1)(գ) հոդվածի համաձայն փակվել է, համարվում է, որ պատասխանատվության փոխանցումը կայացել է, եթե առկա բոլոր փաստերը ցույց են տալիս, որ պահեստավորված CO₂-ն ամբողջությամբ և մշտապես տեղափակվել է, և այն բանից հետո, երբ վայրը հերմետիկորեն փակվել ու ներմղման հարմարանքները հեռացվել են:

Հոդված 19

Ֆինանսական ապահովությունը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պոտենցիալ օպերատորները պահեստավորման թույլտվության հայտի մեջ ներառեն ապացույցներ այն մասին, որ կարող են ձևավորվել բավարար պահուստներ, տրամադրել որպես ֆինանսական երաշխիքներ կամ համարժեք այլ միջոցներ՝ անդամ պետությունների կողմից սահմանված կարգով: Դա արվում է այն բանի համար, որ երաշխավորվի սույն Հրահանգի համաձայն տրված թույլտվությունից բխող պարտավորությունների, այդ թվում՝ փակման և փակմանը հաջորդող ժամանակահատվածի հետ կապված պահանջների, ինչպես նաև պահեստավորման վայրը 2003/87/ԵՀ հրահանգի գործողության շրջանակի մեջ ներառելու հետ կապված պարտավորությունների կատարումը: Այս ֆինանսական երաշխիքը պետք է վավեր լինի և գործի մինչև ներմղման աշխատանքների մեկնարկը:

2. Ֆինանսական ապահովությունը պետք է պարբերաբար ճշտվի՝ արտահոսքի հաշվարկային վտանգի և սույն Հրահանգի համաձայն տրված թույլտվությունից բխող բոլոր պարտավորությունների, ինչպես նաև պահեստավորման վայրը 2003/87/ԵՀ հրահանգի գործողության շրջանակի մեջ ներառելու հետ կապված պարտավորությունների հաշվարկային գումարի փոփոխությունները հաշվի առնելու համար:

3. Առաջին պարբերության մեջ նշված ֆինանսական ապահովությունը կամ դրան համարժեք միջոցները պետք է վավեր լինեն և ուժի մեջ մնան՝

ա) պահեստավորման վայրը 17(1) հոդվածի (ա) կամ (բ) կետերի համաձայն փակելուց հետո, մինչև որ պահեստավորման վայրի համար պատասխանատվությունը 18-րդ հոդվածի (1)-ից (5) կետերի համաձայն փոխանցվի իրավասու մարմնին.

բ) 11(3) հոդվածի համաձայն պահեստավորման թույլտվությունը հետ վերցնելուց հետո՝

i) մինչև պահեստավորման նոր թույլտվություն տալը.

ii) այն դեպքերում, երբ վայրը 17(1)(գ) հոդվածի համաձայն փակվում է՝ մինչև 18(8) հոդվածի համաձայն պատասխանատվության փոխանցումը, այն պայմանով, որ 20-րդ հոդվածում նշված ֆինանսական պարտավորությունները կատարվում են:

Հոդված 20

Ֆինանսական մեխանիզմը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ օպերատորը, անդամ պետությունների կողմից սահմանված կարգով, նախքան 18-րդ հոդվածի համաձայն պատասխանատվության փոխանցումը, իրավասու մարմնին է տրամադրում ֆինանսական օժանդակությունը: Օպերատորի օժանդակությունը պետք է հաշվի առնի առաջին հավելվածում նշված այն չափանիշները և CO₂-ի պահեստավորման պատմության հետ կապված այն տարրերը, որոնք առնչվում են փոխանցմանը հաջորդող պարտավորությունների հաշվարկմանը, և պետք է բավարար լինի՝ առաջիկա 30 տարիների ընթացքում գոնե դիտանցման կանխատեսված ծախսերի ֆինանսավորման համար: Այս ֆինանսական օժանդակությունը կարող է օգտագործվել իրավասու մարմնի այն ծախսերի ֆինանսավորման համար, որոնք կապված են պատասխանատվության փոխանցումից հետո CO₂-ի պահեստավորման վայրի մեկուսացման հուսալիությունն ապահովելու հետ:

2. Հանձնաժողովը կարող է, անդամ պետությունների հետ խորհրդակցելով, մշակել և ընդունել առաջին պարբերության մեջ նշված ծախսերի գնահատման մեթոդաբանություն՝ հաշվի առնելով օպերատորների համար այդ ծախսերի թափանցիկության ու կանխատեսելիության անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 5
ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՔԸ

Հոդված 21

Փոխադրման ցանցի և պահեստավորման վայրերի մատչելիությունը

1. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ պոտենցիալ արտադրված և կուտակված CO₂-ի ստորերկրյա պահեստավորման նպատակով փոխադրման ցանցերի ու պահեստավորման վայրերի մատչելիությունն օգտագործողների համար ապահովելու համար՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն:

2. Առաջին պարբերության մեջ նշված մատչելիությունը պետք է ապահովվի թափանցիկ և ոչ խտրական եղանակով՝ անդամ պետության կողմից սահմանված կարգով: Անդամ պետությունը պետք է կիրառի արդար և ազատ մատչելիության սկզբունքը՝ հաշվի առնելով՝

ա) պահեստավորման այն տարողությունը, որը կարող է տրամադրվել կամ տրամադրվում է 4-րդ հոդվածով սահմանված տարածքներում, ինչպես նաև փոխադրման այն կարողությունը, որը կարող է ապահովվել կամ ապահովվում է.

բ) միջազգային իրավական գործիքների և Համայնքի օրենսդրության համաձայն CO₂-ի նվազեցման պարտավորությունների այն բաժինը, որ դիմողը նախատեսում է կատարել CO₂-ի կուտակման և երկրաբանական պահեստավորման միջոցով.

գ) մատչելիության ապահովումը մերժելու անհրաժեշտությունը, երբ առկա է տեխնիկական մասնագրերի այնպիսի անհամատեղելիություն, որը չի կարող արդյունավետորեն վերացվել.

դ) պահեստավորման վայրի կամ փոխադրման ցանցի սեփականատիրոջ կամ օպերատորի հիմնավորված ու տրամաբանական կարիքները, և պահեստավորման վայրի, ցանցի կամ տեխնոլոգիական մշակման ու օժանդակ կառուցվածքների այլ օգտագործողների շահերը բավարարելու անհրաժեշտությունը:

3. Փոխադրման ցանցի և պահեստավորման վայրի օպերատորները կարող են մերժել մատչելիություն ապահովելը՝ տարողության պակասի հիմնավորմամբ: Ցանկացած մերժման համար պետք է տրվեն հիմնավորված պատճառաբանություններ:

4. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ, որպեսզի ապահովեն, որ ազատ տարողության կամ միացումների բացակայության հիմնավորմամբ

մատչելիության ապահովումը մերժող օպերատորը աշխատանքներ իրականացնի կառուցվածքների հզորությունների մեծացման ուղղությամբ՝ այնքանով, որքանով դա տնտեսապես հիմնավորված է, կամ երբ պոտենցիալ օգտագործողը պատրաստ է վճարել այդ աշխատանքների համար՝ պայմանով, որ դա բացասական ազդեցություն չի ունենա փոխադրման կառուցվածքների ու CO₂-ի երկրաբանական պահեստավորման էկոլոգիական անվտանգության վրա:

Հոդված 22

Վեճերի լուծումը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ վեճերի լուծման գործող մեխանիզմներ լինեն, այդ թվում՝ վիճող կողմերից անկախ իրավասու մարմին, որը հնարավորություն կունենա ստանալու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք կնպաստեն փոխադրման կառուցվածքների և պահեստավորման վայրերի մատչելիության ապահովման հետ կապված վեճերի արագ լուծմանը՝ հաշվի առնելով 21(2) հոդվածով սահմանված չափանիշները և մատչելիության ապահովման շուրջ բանակցությունների մեջ ներգրավված կողմերի թիվը:
2. Միջսահմանային վեճերի դեպքում գործում է այն անդամ պետության վեճերի կարգավորման օրենսդրությունը, որի իրավագործության ներքո են գտնվում վեճի առարկա դարձած փոխադրման ցանցը կամ պահեստավորման վայրը: Այն դեպքերում, երբ անդրսահմանային վեճը վերաբերում է ավելի քան մեկ անդամ պետության տարածքում գտնվող փոխադրման ցանցին կամ պահեստավորման վայրին, ներգրավված անդամ պետությունները պետք է խորհրդակցեն միմյանց հետ՝ սույն Հրահանգի դրույթները հետևողականորեն կիրառելու համար:

ԳԼՈՒԽ 6

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 23

Իրավասու մարմինը

Անդամ պետությունները նշանակում կամ ստեղծում են սույն Հրահանգով սահմանված պարտականությունների կատարման համար պատասխանատու մեկ կամ ավելի իրավասու մարմիններ: Այն դեպքերում, երբ նշանակվում է ավելի քան մեկ իրավասու մարմին, անդամ պետությունը կարգ է սահմանում՝ սույն Հրահանգի համաձայն այդ մարմինների աշխատանքների համակարգումն իրականացնելու համար:

Հոդված 24

Անդրսահմանային համագործակցությունը

CO₂-ի անդրսահմանային փոխադրման, անդրսահմանային պահեստավորման վայրերի կամ անդրսահմանային պահեստավորման համալիրների դեպքում ներգրավված անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է միաժամանակ բավարարեն սույն Հրահանգի և Համայնքի օրենսդրության համապատասխան պահանջները:

Հոդված 25

Գրանցամատյանները

1. Իրավասու մարմինը պետք է բացի և վարի՝

ա) տրված պահեստավորման թույլտվությունների գրանցամատյաններ և

բ) բոլոր փակված պահեստավայրերի և դրանք շրջապատող համալիրների, ինչպես նաև դրանց հատակագծերի ու տարածական կտրվածքով քարտեզների և պահեստավորված CO₂-ի ամբողջական և մշտական տեղափակման հուսալիությունը գնահատելու համար պահանջվող այլ տվյալների մշտական գրանցամատյան:

2. Առաջին պարբերության մեջ նշված գրանցամատյանները պետք է հիմք ընդունվեն իրավասու ազգային մարմինների կողմից համապատասխան պլանավորման աշխատանքների ժամանակ և ռեգիստրում գրանցված պահեստավայրերում CO₂-ի

երկրաբանական պահեստավորման հետ առնչություն ունեցող ամեն տեսակի գործունեության համար թույլտվություն տալու ժամանակ:

Հոդված 26

Հանրության իրազեկումը

Անդամ պետությունները պետք է հանրության համար մատչելի դարձնեն CO₂-ի ստորերկրյա պահեստավորման վերաբերյալ տեղեկությունները՝ Համայնքի օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 27

Անդամ պետությունների կողմից ներկայացվող հաշվետվությունները

1. Երեք տարին մեկ անգամ անդամ պետությունները պետք է Հանձնաժողով հաշվետվություն ներկայացնեն սույն Հրահանգի կատարման և 25(1)(բ) հոդվածով սահմանված ռեգիստրի վարման մասին: Առաջին հաշվետվությունը պետք է Հանձնաժողովին ուղարկվի մինչև 2011թ. հունիսի 30-ը: Հաշվետվությունը պետք է կազմվի Հանձնաժողովի կողմից մշակված հարցաշարի կամ օրինակելի ձևի հիման վրա՝ 91/692/ԵՏՀ Հրահանգի 6-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն: Հարցաշարը կամ օրինակելի ձևն ուղարկվում է անդամ պետություններ՝ հաշվետվությունը ներկայացնելու վերջնաժամկետից առնվազն վեց ամիս առաջ:
2. Հանձնաժողովը սույն Հրահանգի կատարման հետ կապված տեղեկատվության փոխանակում պետք է կազմակերպի անդամ պետությունների իրավասու մարմինների միջև:

Հոդված 28

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային նորմերի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ են սահմանում և ձեռնարկում են բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ դրանց կիրառումն ապահովելու նպատակով: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ: Անդամ պետություններն այս

դրույթների մասին Հանձնաժողովին տեղեկացնում են մինչև 2011 թվականի հունիսի 25-ը և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 29

Փոփոխություններ հավելվածներում

Հավելվածներում փոփոխություններ կատարելու համար կարող են ընդունվել ակտեր: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 30(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 30

Կոմիտեի ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Կլիմայի փոփոխման հարցերով կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով նույն որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

ԳԼՈՒԽ 7

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Հոդված 31

85/337/ԵՏՀ Հրահանգի փոփոխումը

Թիվ 85/337/ԵՏՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Ի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«16. 800 մմ-ը գերազանցող տրամագծով և 40 կմ-ից ավելի երկարությամբ ջրատարներ՝

- գազի, նավթի, քիմիական նյութերի փոխադրման համար, և

- ստորերկրյա պահպանման նպատակներով ածխաթթու գազի (CO₂) հոսքերի փոխադրման համար, այդ թվում՝ նաև պոմպային և ճնշակային կայաններ».

բ) ավելացնել հետևյալ կետերը՝

«23. Ածխաթթու գազի ստորերկրյա պահեստավորման մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն պահեստավորման վայրերը []:

24. Սույն հավելվածով նախատեսված օբյեկտներից 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն ստորերկրյա պահեստավորման նպատակով CO₂-ի հոսքերը որսալու համար նախատեսված կայանքները, կամ երբ որսված CO₂-ի տարեկան ընդհանուր զանգվածը մեծ կամ հավասար է 1,5 մեգատոննայի:».

2. II հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 3-րդ կետը լրացնել հետևյալ ենթակետով՝

«ժ) Սույն Հրահանգի I հավելվածով չնախատեսված օբյեկտներից 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն ստորերկրյա պահեստավորման նպատակով CO₂-ի հոսքերը որսալու համար նախատեսված:».

բ) 10-րդ կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«(թ) նավթի և գազի խողովակաշարեր ու երկրաբանական պահեստավորման նպատակներով CO₂-ի հոսքերի փոխադրման խողովակաշարեր (I-ին հավելվածում չընդգրկված ծրագրեր):»:

Հոդված 32

2000/60/ԵՀ հրահանգի փոփոխումը

2000/60/ԵՀ հրահանգի 11(3)(ժ) հոդվածում երրորդ պարբերույթից հետո ավելացնել հետևյալ պարբերությո՜ւթը.

«– պահեստավորման նպատակով ածխաթթու գազի ներմղումը երկրաբանական այնպիսի ձևավորումների մեջ, որոնք այլ բանի համար այլևս երբեք չեն կարող օգտագործվել, պարտադիր պայման ընդունելով այն, որ ներմղումը կատարվի «Ածխաթթու գազի երկրաբանական պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն կամ դրա 2(2) հոդվածի համաձայն հանված լինի այդ հրահանգի կարգավորման դաշտից.»:»:

Հոդված 33

2001/80/ԵՀ հրահանգի փոփոխումը

2001/80/ԵՀ հրահանգում ավելացնել հետևյալ հոդվածը.

«Հոդված 9ա

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 300 մեգավատ կամ ավելի էլեկտրական հզորություն ունեցող այրման բոլոր այն կայանների օպերատորները, որոնց համար շինարարության սկզբնական լիցենզիան, կամ նման կարգի բացակայության դեպքում՝ շահագործման սկզբնական լիցենզիան տրվել է «Ածխաթթու գազի երկրաբանական պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն, ապահովեն, որ բավարարվեն հետևյալ պայմանները.

- առկա են պահեստավորման համապատասխան վայրեր.
- փոխադրման կառուցվածքները տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված են.
- ածխաթթու գազի որսման կայանքների կատարելագործումը տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված է:

2. Եթե բավարարվում են 1-ին պարբերությամբ նախատեսված պայմանները, իրավասու մարմինն ապահովում է, որ օբյեկտի տեղակայման վայրում հարմար տեղ առանձնացվի ածխաթթու գազի որսման և սեղմման համար: Իրավասու մարմինը որոշում է պայմանների հետ համապատասխանությունը 1-ին պարբերությունում նշված գնահատման և առկա այլ տվյալների հիման վրա, հատկապես՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության պաշտպանության մասով:»:

Հոդված 34

2004/35/ԵՀ հրահանգի փոփոխումը

2004/35/ԵՀ հրահանգի երրորդ հավելվածում ավելացնել հետևյալ պարբերությունը.

«14. Պահեստավորման վայրերի շահագործումը «Ածխաթթու գազի երկրաբանական պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն:»:

Հոդված 35

2006/12/ԵՀ հրահանգի փոփոխումը

2006/12/ԵՀ հրահանգի 2(1)(ա) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) մթնոլորտ արտանետված գազային թափոնները և երկրաբանական պահեստավորման նպատակով որսված ու փոխադրված ածխաթթու գազը, որը պահեստավորվում է «Ածխաթթու գազի երկրաբանական պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 2009/31/ԵՀ հրահանգին համապատասխան կամ այդ հրահանգի 2(2) հոդվածի համաձայն, հանվում է այդ հրահանգի կարգավորման դաշտից:»:

Հոդված 36

Թիվ 1013/2006 (ԵՀ) կանոնակարգի փոփոխումը

Թիվ 1013/2006 (ԵՀ) կանոնակարգի 1(3) հոդվածում ավելացնել հետևյալ կետը.

«ը) Երկրաբանական պահեստավորման նպատակով CO₂-ի փոխադրումը «Ածխաթթու գազի երկրաբանական պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգին համապատասխան,»:

Հոդված 37

2008/1/ԵՀ հրահանգի փոփոխումը

2008/1/ԵՀ հրահանգի առաջին հավելվածում ավելացնել հետևյալ կետը.

«6.9. Ածխաթթու գազի ստորերկրյա պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն՝ ածխաթթու գազի երկրաբանական պահեստավորման նպատակով սույն Հրահանգով կարգավորվող օբյեկտներից արտանետվող CO₂-ի հոսքերի որսում:»:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 38

Վերանայումը

1. Հոդված 27-ում նշված զեկույցներն ստանալուց հետո՝ ինն ամսվա ընթացքում, Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն ներկայացնի սույն Հրահանգի կատարման մասին:
2. Մինչև 2015 թվականի մարտի 31-ը ներկայացվելիք հաշվետվության մեջ Հանձնաժողովը, սույն Հրահանգի կատարման և ԱԳՈՍՊ-ի հետ կապված փորձի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով տեխնիկական առաջընթացը և գիտության վերջին նվաճումները, պետք է մասնավորապես գնահատի՝
 - թե արդյոք պատշաճ կերպով ապահովվել է CO₂-ի մշտական տեղափակումն այնպիսի եղանակով, որ հնարավորինս կանխվի և նվազեցվի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը և դրա հետևանքով ծագող՝ մարդու առողջությանն առնչվող ռիսկերը, ինչպես նաև ԱԳՈՍՊ-ի անվտանգությունը՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության մասով.
 - արդյոք Հանձնաժողովի կողմից 10-րդ հոդվածում նշված պահեստավորման թույլտվությունների նախագծերի և 18-րդ հոդվածում նշված պատասխանատվության փոխանցման մասին որոշումների նախագծերի վերանայման հետ կապված ընթացակարգերը դեռևս անհրաժեշտ են.
 - CO₂-ի հոսքերի ընդունման չափանիշների հետ կապված դրույթների և 12-րդ հոդվածում նշված ընթացակարգերի կիրառման փորձը.
 - 21-րդ և 22-րդ հոդվածներում նշված՝ երրորդ անձանց մուտքին վերաբերող ընթացակարգերի և 24-րդ հոդվածում նշված՝ անդրսահմանային համագործակցությանը վերաբերող ընթացակարգերի կիրառման փորձը.
 - 2001/80/ԵՀ հրահանգի 9ա հոդվածում նշված՝ 300 մեգավատ և ավելի մեծ նախագծային հզորություն ունեցող այրման կայաններին վերաբերող դրույթները.
 - երրորդ երկրներում CO₂-ի երկրաբանական պահեստավորման հեռանկարները.
 - I և II հավելվածներում նշված չափանիշների հետագա լրամշակման և թարմացման հնարավորությունը.
 - կենսազանգված այրող կայանների համար ԱԳՈՍՊ-ի իրականացման խթանների կիրառման փորձը.

- CO₂-ի փոխադրման հետ կապված էկոլոգիական ռիսկերի հետագա կարգավորման անհրաժեշտությունը.

և, անհրաժեշտության դեպքում, առաջարկություններ ներկայացնի հրահանգի վերանայման համար:

3. Երբ CO₂-ի մշտական տեղափակումն այնպիսի եղանակով, որ հնարավորինս կանխվի և նվազեցվի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը և դրա հետ կապված՝ մարդու առողջության ռիսկերը, ինչպես նաև դրա տնտեսական նպատակահարմարությունը բավարար չափով հաստատվում են ստացված արդյունքներով, պետք է ուսումնասիրվի այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ և գործնականում հնարավոր է էլեկտրաէներգիա արտադրող մեծ հզորության, նոր այրման կայանների համար արտանետումների մասով պարտադիր պահանջ սահմանել՝ համաձայն 2001/80/ԵՀ հրահանգի 9ա հոդվածի:

Հոդված 39

Փոխատեղման և անցումային դրույթներ

1. Անդամ պետությունները մինչև 2011 թվականի հունիսի 25-ը գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը: Նրանք անմիջապես այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղումներ կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հետևյալ պահեստավորման վայրերը, որոնք մտնում են սույն Հրահանգի կարգավորման դաշտի մեջ, մինչև 2012 թվականի հունիսի 25-ը շահագործվեն սույն Հրահանգի պահանջներին համապատասխան՝

ա) գործող օրենսդրության համաձայն՝ 2009 թվականի հունիսի 25-ի դրությամբ օգտագործվող պահեստավորման վայրերը.

բ) այդ օրենսդրության համաձայն՝ մինչև 2009 թվականի հունիսի 25-ը կամ այդ նույն օրն արտոնված պահեստավորման վայրերը՝ այն պայմանով, որ դրանք օգտագործվեն մեկ տարվա ընթացքում՝ սկսած այդ օրվանից:

Այս դեպքերում 4, 5, 7(3), 8(2) և 10-րդ հոդվածները չեն գործում:

Հոդված 40

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակմանը հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 41

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի ապրիլի 23-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Պ. Նեչաս

[1] ՊՏ C 27, 03.02.2009թ., էջ 75:

[2] Եվրոպական պառլամենտի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 6-ի որոշում:

[3] ՊՏ L 33, 07.02.1994թ., էջ 11:

[4] ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

[5] ՊՏ L 24, 29.01.2008թ., էջ 8:

[6] ՊՏ L 175, 05.07.1985թ., էջ 40:

[7] ՊՏ L 275, 25.10.2003թ., էջ 32:

[8] ՊՏ, L 143, 30.04.2004թ., էջ 56:

[9] ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48:

[10] ՊՏ թիվ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[11] ՊՏ L 114, 27.04.2006թ., էջ 9:2006/12/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվել որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ «Թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգով (ՊՏ L 312, 22.11.2008թ., էջ 3), որն ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերի 12-ից:

[12] ՊՏ L 190, 12.07.2006թ., էջ 1:

[13] ՊՏ L 327, 22.12.2000թ., էջ 1:

[14] ՊՏ L 372, 27.12.2006թ., էջ 19:

[15] ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1:

[16] ՊՏ, C 321, 31.12.2003թ., էջ 1:

[] ՊՏ L 140, 05.06.2009թ., էջ 114»:

ՀԱՎԵԼՎԱԾ I

4(3) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՈՒ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԲՆՈՒԹԱԳՐԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4(3) հոդվածում նշված հավանական պահեստավորման համալիրի և շրջապատող տարածքի բնութագրումն ու գնահատումը պետք է իրականացվեն երեք փուլով՝ համաձայն տվյալ պահին առկա լավագույն մեթոդների և ստորև ներկայացված չափանիշների: Իրավասու մարմինը կարող է թույլատրել շեղումներ մեկ կամ երկու չափանիշներից, եթե օպերատորը ցույց է տվել, որ դա չի ազդի 4-րդ հոդվածում նշված հաշվարկների իրականացման համար անհրաժեշտ բնութագրման և գնահատման աշխատանքների վրա:

Փուլ 1՝ **Տվյալների հավաքում**

Պետք է հավաքել այնքան տվյալներ, որ բավարար լինի կառուցելու պահեստավորման վայրի և համալիրի հատվածում երկրակեղևի՝ ներառյալ մակաշերտի ապարների և շրջապատող տարածքի, այդ թվում՝ հիդրավլիկորեն փոխկապակցված գոտիների ծավալային, ստատիկ եռաչափ մոդելը: Այդ տվյալները պետք է ներկայացնեն պահեստավորման համալիրի առնվազն հետևյալ առանձնահատուկ բնութագրերը՝

ա) երկրաբանություն և երկրաֆիզիկա.

բ) ջրաերկրաբանություն (մասնավորապես՝ սպառման համար պիտանի ստորերկրյա ջրերի առկայությունը).

գ) ամբարման կառուցվածքների նախագծում (այդ թվում՝ CO₂-ի ներմղման համար նախատեսվող խողոչի և պահեստավորման առավելագույն տարողության ծավալային հաշվարկը).

դ) երկրաքիմիա (ներծծման, հանքայնացման ցուցանիշները).

ե) երկրամեխանիկա (ապարների ծակոտկենությունը, ապարներում ճեղքերի հետևանքով առաջացող ճնշումը).

զ) սեյսմիկություն.

է) արտահոսքի հավանականություն առաջացնող բնական և արհեստական անցքերի, այդ թվում՝ ջրհորների և հորատանցքերի, առկայությունը և վիճակը:

Համալիրի մերձակայքի հետևյալ բնութագրերը պետք է փաստաթղթավորվեն՝

ը) պահեստավորման համալիրի շրջակայքում տեղակայված այն օբյեկտները, որոնց վրա CO₂-ի պահեստավորումը կարող է բացասական ազդեցություն ունենալ.

թ) բնակչության բաշխվածությունը ստորերկրյա պահեստավայրի վերևում գտնվող շրջանում.

ժ) մոտակայքում արժեքավոր բնական պաշարների առկայությունը (այդ թվում՝ մասնավորապես, «Նատուրա 2000» գոտիները՝ համաձայն «Վայրի թռչունների պահպանության մասին» Խորհրդի 1979թ. ապրիլի 2-ի 79/409/ԵՏՀ հրահանգի ու «Բնական միջավայրերի, վայրի կենդանատեսակների և բուսատեսակների պահպանության մասին» Խորհրդի 1992թ. մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգի, ինչպես նաև խմելու ջրերը և ածխաջրածնային բնական ռեսուրսները).

ժա) պահեստավորման համալիրի մոտակայքում իրականացվող գործունեությունը (օրինակ՝ ածխաջրածինների երկրաբանական որոնում, արդյունահանում և պահեստավորում, գետերմալ ջրատար հորիզոնների ու ստորերկրյա ջրային ռեսուրսների օգտագործում) և դրա հետ փոխազդելու հավանականությունը.

ժբ) հեռավորությունը CO₂-ի հավանական աղբյուր(ներ)ից (այդ թվում՝ CO₂-ի հնարավոր աղբյուրների ընդհանուր ծավալի գնահատումը) և համապատասխան փոխադրման ցանցերի առկայությունը:

Փուլ 2՝ Երկրակեղևի եռաչափ ստատիկ երկրաբանական մոդելի կառուցումը

Օգտագործելով առաջին փուլում հավաքած տվյալներն ու ամբարող տարողությունների նմանակման համակարգչային ծրագրերը, կառուցվում է ապագա համալիրի հատվածում երկրակեղևի, այդ թվում՝ մակաշերտի ապարների, ինչպես նաև հիդրավիկորեն փոխկապակցված գոտիների և ջրերի ստատիկ երկրաբանական եռաչափ մոդել կամ մի քանի մոդելներ: Երկրակեղևի ստատիկ երկրաբանական մոդելը պետք է ներկայացնի համալիրի՝

ա) ֆիզիկական տարողության երկրաբանական կառուցվածքը.

բ) մինչև վերջ լցված տարողության և շրջապատող ձևավորումների (մակաշերտի ապարների, մեկուսիչ շերտերի, ծակոտկեն և թողունակ հորիզոնների) երկրամեխանիկական, երկրաքիմիական և աերոդինամիկ հատկությունները.

գ) երկրաբանական ճեղքվածքների նկարագրությունն ու մարդու գործունեության հետևանքով առաջացած անցքերի առկայությունը.

դ) պահեստավորման համալիրի տարածքը և ուղղաձիգ չափը.

ե) ծակոտկեն շերտերի ծավալը (այդ թվում՝ դրանց դասավորությունը)։

զ) հեղուկների բաշխվածությունը պահեստավորման վայրի ստորին մասում։

է) այլ բնութագրեր։

Մոդելի կառուցման համար օգտագործվող պարամետրերից յուրաքանչյուրի փոփոխականությունը (սխալանքը) գնահատվում է՝ պարամետրին տարբեր արժեքներ տալով և ֆունկցիայի սահմանային մեծությունները հաշվարկելով։ Մոդելի հետ կապված ցանկացած սխալանք նույնպես պետք է գնահատվի։

Փուլ 3՝ Պահեստավորման վայրի դինամիկական հատկությունների, զգայունության բնութագիրը, ռիսկերի գնահատումը

Բնութագրումը և գնահատումը պետք է հիմնվեն դինամիկական մոդելավորման վրա, որն իրենից ներկայացնում է պահեստավայրի մեջ CO₂-ի ներմղման ժամանակային իմիտացիոն մոդել՝ օգտագործելով համակարգչային ծրագրերով երկրորդ փուլում կառուցված երկրակեղևի ստատիկ եռաչափ մոդել(ներ)ը։

Փուլ 3.1՝ Պահեստի դինամիկական հատկությունների բնութագրումը

Պետք է հաշվի առնվեն առնվազն հետևյալ գործոնները՝

ա) ներմղման հնարավոր ծավալները և CO₂-ի հոսքի հատկությունները։

բ) պրոցեսների փոխկապակցված մոդելավորման արդյունավետությունը (այն ցույց է տալիս, թե ինչպես են նմանակման մոդելներում տարբեր ազդեցության գործոնները փոխազդում միմյանց հետ)։

գ) ակտիվ պրոցեսները (այն է՝ ինչպես ներմղված CO₂-ը կփոխազդի երկրաբանական խորշում գտնվող հանքանյութերի հետ)։

դ) ամբարման տարողության նմանակման համար օգտագործված մոդելը (արդյունքները հաստատելու համար կարող են պահանջվել բազմաթիվ նմանակումներ)։

ե) կարճաժամկետ և երկարաժամկետ նմանակումներ (CO₂-ի ճակատագիրը առաջիկա տասնամյակներում և հազարամյակներում, այդ թվում՝ ջրի մեջ դրա լուծվելու հեռանկարները, որոշելու համար)։

Դինամիկական մոդելավորումը պետք է տեղեկություններ տրամադրի հետևյալի մասին՝

զ) պահեստավորման խորշում առկա ճնշում և ջերմաստիճան՝ որպես ներմղման տեմպի արդյունքում առաջացող ֆունկցիա, ինչպես նաև ժամանակի ընթացքում ներմղված գազի քանակություն.

է) CO₂-ի զբաղեցրած տարածք և ուղղաձիգ ծավալի չափը ժամանակի ընթացքում.

ը) պահեստում CO₂-ի հոսքի բնույթ և փուլայնություն.

թ) CO₂-ի տեղափակման մեխանիզմներ և դրանց հզորություն (այդ թվում՝ պահեստավորման վայրի տարողության ծանրաբեռնվածության մակարդակը [արտահոսքի վտանգը] ու պատնեշ հանդիսացող կողային և ուղղաձիգ ապարները).

ժ) պահեստավորման համալիրի երկրորդային տեղափակման համակարգեր.

ժա) պահեստավորման տարողությունը և ճնշման գրադիենտները պահեստավորման վայրում,

ժբ) պահեստավորման համար օգտագործվող երկրաբանական կազմավորման (կազմավորումների) պատնեշային ապարների և մակաշերտի ապարների ճաքերի գոյացման վտանգ,

ժգ) մակաշերտի ապարների մեջ CO₂-ի ներթափանցման վտանգ,

ժդ) պահեստավորման վայրից արտահոսքի վտանգ (օր.՝ լքված կամ ինչպես հարկն է չմեկուսացված հորերի միջով),

ժե) միգրացիայի չափերը (միջանցիկ պահեստներում),

ժզ) ճեղքերի փակման տեմպերը,

ժէ) երկրաբանական կազմավորման մեջ առկա հեղուկների քիմիական բաղադրության փոփոխումը և դրա արդյունքում տեղի ունեցող ռեակցիաները (օր.՝ pH-ի փոփոխություն, հանքանյութերի կազմավորում), ինչպես նաև այդ ռեակցիաների մոդելավորումը՝ փոփոխությունները գնահատելու համար,

ժը) երկրաբանական ձևավորման մեջ առկա հեղուկների տեղաշարժը,

ժթ) բարձր սեյսմիկությունը և մակերևույթի նիշը:

Փուլ 3.2՝ Զգայունության բնութագրումը

Առանձին պարամետրերի վերաբերյալ կատարված ենթադրությունների գնահատման զգայունությունը որոշելու համար պետք է բազմաթիվ նմանակումներ իրականացվեն: Իմիտացիաները պետք է հիմնվեն երկրակեղևի ստատիկ երկրաբանական մոդել(ներ)ում փոփոխվող պարամետրերի և դինամիկ մոդելավորման հաշվարկում՝ ոչ

գծային ֆունկցիաների ու ենթադրությունների վրա: Էական զգայունության դեպքերը հաշվի են առնվում ռիսկերի գնահատման մեջ:

Փուլ 3.3՝ Ռիսկի գնահատումը

Ռիսկի գնահատումը ներառում է առնվազն հետևյալը՝

3.3.1. Վտանգի բնութագրումը

Վտանգի բնութագրումը հիմնվում է պահեստավորման համալիրից արտահոսքի հավանականության բնութագրման վրա, որը որոշվում է վերը նկարագրված դինամիկական մոդելավորման և ապահովության բնութագրման հիման վրա: Այլ հարցերի թվում, այն պետք է հաշվի առնի՝

ա) արտահոսքի հնարավոր ճանապարհները.

բ) արտահոսքի բացահայտված ճանապարհների պոտենցիալ թողունակությունը (արտահոսքի ծավալները).

գ) հնարավոր արտահոսքի վրա ազդող կրիտիկական պարամետրերը (օր.՝ պահեստում առավելագույն ճնշումը, ներմղման առավելագույն տեմպերը, ջերմաստիճանը, երկրակեղևի ստատիկ երկրաբանական մոդել(ներ)ում արդյունքների կախվածությունը տարբեր ենթադրություններից).

դ) CO₂-ի պահեստավորման երկրորդային հետևանքները, այդ թվում՝ երկրաբանական կազմավորման հեղուկների տեղաշարժը և նոր նյութերի կազմավորումը.

ե) ցանկացած այլ գործոն, որը կարող է վտանգ ներկայացնել մարդու առողջության և միջավայրի (օրինակ՝ նախագծի հետ կապ ունեցող ֆիզիկական կառուցվածքների) համար:

Վտանգների բնութագրում պետք է նշվի շահագործման բոլոր հնարավոր իրավիճակները՝ պահեստավորման համալիրի ապահովությունն ստուգելու նպատակով:

3.3.2. Ազդեցության գնահատումն իրականացվում է միջավայրի առանձնահատկությունների, պահեստավորման համալիրի վերևում բնակավայրերի բաշխման և մարդու գործունեության տեսակների, ինչպես նաև 3.3.1 փուլում նախանշված հնարավոր ուղիներով արտահոսող CO₂-ի վարքագծի ու ճակատագրի հիման վրա:

3.3.3. Հետևանքների գնահատումն իրականացվում է 3.3.1 փուլում նշված հավանական արտահոսքից կենսաբանական կոնկրետ տեսակների, համայնքների կամ բնակության միջավայրերի զգայունության հիման վրա: Անհրաժեշտության դեպքում, պետք է

գնահատվեն կենսոլորտում (այդ թվում՝ հողում, ծովային նստվածքում և բենթոսային ջրերում) CO₂-ի սովորականից բարձր կոնցենտրացիայի ազդեցության հետևանքները (շնչահեղձություն, հիպերկապնիա, ինչպես նաև CO₂-ի արտահոսքի դեպքում՝ տվյալ միջավայրի ցածր pH): Այն պետք է նաև ներառի արտահոսող CO₂-ի հոսքերի մեջ հնարավոր այլ խառնուրդների ազդեցության գնահատումը (ներմղված CO₂-ի մեջ առկա կամ պահեստավորման ընթացքում գոյացած նոր խառնուրդները): Այդ ազդեցությունները պետք է ներկայացվեն՝ կախված ժամանակից ու տարածությունից և վերաբերեն տարբեր մասշտաբի արտահոսքերին:

3.3.4. Ռիսկի բնութագրումը ներառում է կարճաժամկետ և երկարաժամկետ պլանով պահեստավայրի անվտանգության ու ամբողջականության գնահատումը, այդ թվում՝ ստանդարտ շահագործման պայմաններում արտահոսքի վտանգի և հնարավոր ամենածանր էկոլոգիական ու առողջական հետևանքների գնահատումը: Ռիսկի բնութագրումը պետք է հիմնվի վտանգների, ազդեցության և հետևանքների գնահատման վրա: Այն պետք է ներառի նաև պահեստավայրի բնութագրման և գնահատման փուլերի ընթացքում բացահայտված անորոշության աղբյուրի գնահատում և, երբ դա հնարավոր է, առաջարկություններ՝ անորոշությունը նվազեցնելու հնարավորությունների մասին :

[1] ՊՏ թիվ L 103, 25.04.1979թ., էջ 1:

[2] ՊՏ թիվ L 206, 22.07.1992թ., էջ 7:

ՀԱՎԵԼՎԱԾ II

13(2) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԴԻՏԱՆՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԵՎ ՓԱԿՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՏԱՆՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Դիտանցման ծրագրի մշակումը և թարմացումը

13(2) հոդվածում նշված դիտանցման ծրագիրը պետք է մշակվի առաջին հավելվածի 3-րդ փուլում իրականացված ռիսկի գնահատման վերլուծությանը համապատասխան և 13(1) հոդվածով սահմանված դիտանցման պահանջները բավարարելու համար թարմացվի՝ համաձայն հետևյալ չափանիշների.

1.1. Ծրագրի մշակումը

Դիտանցման ծրագիրը պետք է մանրամասներ ներկայացնի դիտանցման հիմնական փուլերում, այդ թվում՝ սկզբնական շրջանում, շահագործման ընթացքում և փակմանը հաջորդող ժամանակահատվածում դիտանցման վերաբերյալ: Յուրաքանչյուր փուլի համար պետք է ներկայացվի հետևյալը՝

ա) հսկվող պարամետրերը.

բ) օգտագործվող դիտանցման մեթոդները և դրանց ընտրության հիմնավորումը.

գ) դիտանցման և նմուշառման կետերի ընտրության հիմնավորումը.

դ) իրականացման հաճախականության և նմուշառման գրաֆիկի ընտրության հիմնավորումը:

Դիտանցման ենթակա պարամետրերը որոշվում են նախօրոք՝ դիտանցման նպատակներին հասնելու համար: Այդուհանդերձ, ծրագիրը պետք է ամեն դեպքում նախատեսի հետևյալ գործոնների չընդհատվող կամ հաճախակի դիտանցում՝

ե) ներմղման կայանքներից CO₂-ի չնախատեսված արտահոսքեր.

զ) ներմղման հորերի գլխամասերում CO₂-ի ծավալային հոսքի արագությունը.

է) ներմղման հորերի գլխամասերում CO₂-ի ճնշումը և ջերմաստիճանը (ներմղված գազի զանգվածը որոշելու համար).

ը) ներմղված նյութի քիմիական անալիզը.

թ) գազամբարում ջերմաստիճանը և ճնշումը (CO₂-ի ֆազային վարքագիծը և վիճակը որոշելու համար):

Դիտանցման մեթոդի ընտրությունը պետք է հիմնված լինի նախագծման պահին գոյություն ունեցող ամենաարդիական մոտեցումների վրա: Հետևյալ այլընտրանքները պետք է քննարկվեն և, անհրաժեշտության դեպքում, կիրառվեն՝

ժ) հողի ներքին շերտերի և մակերևույթի վրա CO₂-ի առկայության, տեղադիրքի և դրա արտահոսքի ուղիների հայտնաբերման տեխնոլոգիաներ.

ժա) առաջին հավելվածի և 4-րդ հոդվածի համաձայն սահմանված՝ պահեստավորման կազմավորման եռաչափ երկրաբանական մոդելների հետ տարածքային նմանական եռաչափ մոդելի ճշտման նպատակով գազամբարի ներսում CO₂-ի շլեյֆի ճնշում-ծավալ կախվածության և տարածքային/ուղղաձիգ բաշխման վերաբերյալ տվյալներ ստանալու համար օգտագործվող տեխնոլոգիաներ.

ժբ) լայն մասշտաբներով որոնման հնարավորություն տվող տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան, էական շեղումների կամ արտահոսքերի դեպքում, հայտնաբերելու արտահոսքի նախկինում աննկատ մնացած ճանապարհները պահեստավորման ամբողջ համալիրի տարածքում և դրա սահմաններից դուրս:

1.2. Ծրագրի լրամշակումը

Դիտանցման ժամանակ ստացված տվյալները պետք է հավաքվեն և վերլուծվեն: Ստացված արդյունքները պետք է համեմատվեն ճնշում-ծավալ կախվածությունը ցույց տվող տարածքային դինամիկ մոդելի օգնությամբ կատարված կանխատեսումների և 4-րդ հոդվածի ու 1-ին հավելվածի երրորդ փուլի համաձայն մշակվող ապահովության բնութագրերի համատեքստում կառուցված հագեցման կորերի հետ:

Այն դեպքերում, երբ փաստացի և կանխատեսված տվյալներն էապես տարբերվում են, եռաչափ մոդելը ձևափոխվում է՝ փաստացի տվյալների հիման վրա: Ձևափոխումը հիմնվում է դիտանցման ծրագրով ստացված դիտարկումների, իսկ եթե անհրաժեշտ է ավելի ճշգրիտ կանխատեսումներ ստանալ, ապա՝ լրացուցիչ չափումների արդյունքում ստացված փաստացի տվյալների վրա:

Առաջին հավելվածի երկրորդ ու երրորդ փուլերը պետք է կրկնվեն՝ օգտագործելով ձևափոխված եռաչափ մոդել(ներ)ը, վտանգավոր իրավիճակների նոր սցենար մշակելու և ռիսկերի գնահատման արդյունքները ճշտելու և թարմացնելու համար:

Այն դեպքերում, երբ փաստացի տվյալների վերլուծության և մոդելի ձևափոխման արդյունքում հայտնաբերվում են CO₂-ի նոր աղբյուրներ, արտահոսքի ճանապարհներ կամ կանխատեսումներից էական շեղումներ, համապատասխան փոփոխությունների է ենթարկվում նաև դիտանցման ծրագիրը:

2. Դիտանցումը՝ փակմանը հաջորդող ժամանակահատվածի ընթացքում

Փակմանը հաջորդող ժամանակահատվածի ընթացքում իրականացվող դիտանցումը պետք է հիմնվի 13(2) հոդվածում և սույն հավելվածի 1.2 կետում նշված դիտանցման ծրագրի իրականացման ժամանակ ստացված և մոդելավորված տվյալների վրա: Այն, մասնավորապես, պետք է ծառայի 18(1) հոդվածի մասով որոշում կայացնելու նպատակով անհրաժեշտ տվյալների ստացման համար: